Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 1

2019թ. օգոստոսի 29-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2019-2020ուս-տարվա բեռնվածությունների մասին:
2. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
3. 2019-2020ուս-տարվա դասավանդման գործընթացի կազմակերպման, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի 10 անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի 2019-2020ուս-տարվա բեռնվածությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.- Հարգելի գործընկերներ, առաջարկում եմ ծանոթանալ 2019-2020 ուսումնական տարվա բեռնվածությանը:

Ամբիոնում պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության բաշխումն արդեն իրականացվել է, սակայն դեռևս չի հաստատվել ռեկտորի կողմից: Ս/թ օգոստոսի 30-ին տեղի կունենա ՀՊՄՀ-ի ռեկտորի և ամբիոնի վարիչների հանդիպում, որի ժամանակ կքննարկվի այս ուսումնական տարվա դասախոսական անձնակազմի բեռնվածությունները: Կարծում եմ մեզ հետ կապված որևէ խնդիր չի լինի: 2019-2020թթ. ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածություններ հետևյալն են.

1. Սահրադյան Արտակ Իսրայելի - տ.գ.դ., պրոֆեսոր, 1,0 հաստիք,
2. Այվազյան Տիգրան Մկրտչի - ֆ.-մ.գ.թ., պրոֆեսորի պաշտ., 1,0 հաստիք,
3. Խոդերյան Բորիս Արտյոմի - տ.գ. թ., դոցենտ, 1,0 հաստիք,
4. Օրդյան Նունե Ալբերտի - տ.գ. թ., դոցենտ, 0,5 հաստիք,
5. Վարդանյան Սոնյա Ոսկանի - տ.գ. թ., դոցենտ, 1,0 հաստիք,

6. Աղաջանյան Մայիս Հայկազի - դոցենտ, 1,0 հաստիք,
7. Հարությունյան Աշոտ Հրայրի - դոցենտ, 1,0 հաստիք:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 2019-2020 ուսումնական տարվա ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությունների մասին տեղեկությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում (տարեկան աշխատանքային պլանը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.-Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ամբիոնի տարեկան աշխատանքային գրաֆիկի ժամանակացույցը: Փոփոխությունների դեպքում նախօրոք դասախոսները կտեղեկացվեն:

Ամբիոնի բոլոր դասախոսներին նախապես՝ մինչ արձակուրդ գնալը, տրվել էին իրենց ծանրաբեռնվածությունները:

Պատրաստ են նաև դասացուցակները:

Խնդրում եմ բոլոր դասախոսներին վերջնականապես կարգավորել իրենց դասացուցակներն ու դասաժամերը:

Արտահայտվեցին տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Վարդանյանը, Բ.Խոդերյանը, Ն.Օրդյանը, ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու պրոֆ.պաշտ. Տ.Այվազյանը, դոցենտներ Ա.Հարությունյանը, Մ.Աղաջանյանը:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա բեռնվածությունները:

3. ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուս-տարվա դասավանդման գործընթացի կազմակերպման, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների նախապատրաստման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ա.Սահրադյան- Արհեստանոցի վարիչին, ուսումնական վարպետներին և լաբորանտին խնդրում եմ կարգի բերել և շահագործել բոլոր լաբորատոր փորձերը, թարմացնել բացատրագրերը՝ անհրաժեշտության դեպքում:

2 . Խնդրում եմ նախապատրաստել 2019-2020 թթ ուսումնական տարվա Ձեր անհատական աշխատանքային պլանները հաջորդ ամբիոնի նիստին քննարկելու համար:

3. Դոցենտ Բ. Խոդերյան խնդրում եմ զբաղվել 3-րդ կուրսի ուսանողների մանկավարժական շարունակական պրակտիկայի կազմակերպական աշխատանքներով, որը նախատեսվում է իրականացնել ՀՊՄՀ-ի 57 հենակետային դպրոցում::

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Լանորատորիաները և արհեստանոցները նախապատրաստել նոր ուսումնական տարվան:

2. Նախապատրաստել ՊԴԱ անհատական աշխատանքային պլանները:

3. Կազմակերպել Տ/Ձ 3-րդ կուրսի մանկավարժական շարունակական պրակտիկան և պատրաստել հրամանները:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 2

2019թ. սեպտեմբերի 6-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:
2. Դասալսումների գրաֆիկի քննարկում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի բոլոր անդամները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահիրադյան Ա.Ի. - 2019-2020 ուսումնական տարում ամբիոնը սպասարկելու է ,,Տեխնոլոգիա և ձեռնարկչություն,, մասնագիտության ուսանողներին, և դասընթացների կազմակերպման համար կրթության էլեկտրոնային հարթակում (Google Classroom) ստեղծել է թվով 23 դասընթաց, որից 21-ը՝ մասնագիտական, 1-ը՝ մանկավարժական շարունակական պրակտիկա, 1-ը՝ մանկավարժական պրակտիկա:

Դասախոսները ամբիոնի քննարկմանն են ներկայացրել իրենց կողմից դասավանդվող դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները:

Արտահայտվեցին ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., պրոֆ. պաշտ. Տ.Մ.Այվազյանը, տեխ. գիտ. թեկն., դոցենտներ Ն. Ա. Օրդյանը, Ս. Ռ. Վարդանյանը, Բ.Ա. Խոդերյանը, դոցենտներ Ա. Հ. Հարությունյանը, Մ. Հ. Աղաջանյանը, ովքեր ներկայացրեցին առաջին կիսամյակում իրենց կողմից դասավանդվող դասընթացների փաթեթները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները՝ 06.09.2019թ-ով:

2. ԼՍԵՑԻՆ – Դասալսումների գրաֆիկի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Սահրադյան Ա.Ի. -Հարգելի գործընկերներ, ըստ հաստատված դասացուցակի կազմվել է դասալսումների գրաֆիկ (կցվում է). նախատեսվում է 1-ին կիսամյակում իրականացնել 7 դասալսում:

ՈՐՈՇԵՑԻՆ –Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների գրաֆիկը:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 3

2019թ. սեպտեմբերի 18-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Մանկավարժական պրակտիկաների ընթացքը:
2. Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր.

3.1. Բ. Խոդերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն» դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու մասին:

Նիստին ներկա էին ամբիոնի 10 անդամներ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

Ամբիոնի նիստի նախագահ ընտրվեց դոցենտ, տեխ. գիտ. թեկնածու Ս.Ռ. Վարդանյանը, քարտուղար՝ Հ.Փ.Հովհաննիսյանը:

1. ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկաների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Վարդանյան Ս.- Տեխնոլոգիական կրթության ամբիոնը կազմակերպում և իրականացնում է «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ՄԿԾ-ներով նախատեսված մանկավարժական, ուսումնական, մանկավարժահետազոտական և հետազոտական պրակտիկաները: Ամբիոնի պրակտիկայի պատասխանատուն և ղեկավարը տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ Բ.Ա. Խոդերյանն է: Խնդրում եմ պարոն Խոդերյանին ներկայացնել պրակտիկաների ընթացքի մասին:

2) Խոդերյան Բ. - Առաջին կիսամյակում «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության 3-րդ կուրսի թվով 9 ուսանողների մանկավարժական շարունակական պրակտիկան անց է կացվում ՀՊՄՀ-ի թիվ 57 հենակետային դպրոցում, մեթոդիստն է դոցենտ Ա. Հ. Հարությունյանը, իսկ 4-րդ կուրսի թվով 29 ուսանողների մանկավարժական

ակտիվ պրակտիկան նախատեսվում է կազմակերպել Երևանի թիվ 194 հիմնական դպրոցում՝ 07.10-18.11.2019 թ., մեթոդիստներն են դոցենտներ Մ.Հ. Աղաջանյանը, Ա. Հ. Հարությունյանը և Ս.Ռ. Վարդանյանը:

Մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվելու է Տեխնոլոգիական կրթության ամբիոնում՝ 11.11-29.11.2019թ., գիտական ղեկավարների հետ:

Առաջարկում եմ քննարկել և հաստատել պրակտիկաների վերահսկման ժամանակացույցը.

Ուսումնական հաստատություն	Կուրս	Օր	ժամ	Պրակտիկայի վերահսկող
ՀՊՄՀ-ի թիվ 57 հենակետային դպրոց	ԱԲ 3	25.09.19թ 23.10.19թ 13.11.19թ 11.12.19թ	12:00	Բ.Ա. Խոդերյան Ա.Հ.Հարությունյան
Երևանի թիվ 194 հիմնական դպրոց	ԱԲ 4	07.10.19թ 17.10.19թ. 14.11.19թ.	11:00	Ա.Ի.Սահրադյան Բ.Ա. Խոդերյան
Տեխնոլոգիական կրթության ամբիոն	ԱՄ 2	11.11-29.11.2019 թ.		Ա.Ի.Սահրադյան Բ.Ա. Խոդերյան

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Մանկավարժական պրակտիկաների ընթացքը համարել բավարար:

2. Հաստատել մանկավարժական պրակտիկաների վերահսկման ժամանակացույցը և պատասխանատու նշանակել դոցենտ, տեխ.գիտ.թեկնածու Բ.Ա. Խոդերյանին:

2. ԼՍԵՑԻՆ–Մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Վարդանյան Ս.- Տեխնոլոգիական կրթության ամբիոնում 2019-2020 ուս. տարում մագիստրոսական ատենախոսական թեզ են կատարում «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առաջին կուրսի թվով 6 մագիստրանտներ, իսկ

առկա ուսուցման համակարգի թվով 29 ուսանողներից 24-ն ավարտական աշխատանք են կատարում մեր ամբիոնում, 5-ը՝ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում:

Ըստ դասաբաշխման այս ուսումնական տարում մագիստրոսական թեզ և ավարտական աշխատանք են ղեկավարելու ամբիոնի ներքոնշյալ դասախոսները.

h/h	Գիտական ղեկավար	Մագիստրոսական թեզերի քանակը	Ավարտական աշխատանքների քանակը
1.	Սահրադյան Ա.Ի.	-	4
2.	Այվազյան Տ.Մ.	1	4
3.	Վարդանյան Ս.Ռ.	1	3
4.	Խոդերյան Բ.Ա.	2	4
5.	Օրդյան Ն.Ա.	1	3
6.	Հարությունյան Ա.Հ.	1	3
7.	Աղաջանյան Մ.Հ.	1	3

Բոլոր դասախոսներն էլ ամբիոնի քննարկմանն են ներկայացրել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:

Առաջարկում եմ քննարկել թեմաները և նշել արդիականությունը:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հաստատել 2019-2020 ուս. տարվա մագիստրոսական ատենախոսությունների թեմաները (կցվում է) և ներկայացնել ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

2. Հաստատել 2019-2020 ուս. տարվա առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների թեմաները (կցվում է) և ներկայացնել ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

3. ԼՍԵՑԻՆ - Ընթացիկ հարցեր:

3.1. ԼՍԵՑԻՆ - Բ. Խոդերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն» դասընթացի «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Վարդանյան Ս.- Ամբիոնի դոցենտներ Բ.Խոդերյանը և Ա.Հարությունյանը կազմել են լաբորատոր աշխատանքների ուղեցույց, որը վերաբերում է «Տեխնիկական ստեղծագործություն և արդյունաբերական դիզայն» դասընթացին: Ուղեցույցն իր մեջ ներառում է թվով 4 լաբորատոր աշխատանքներ, շարադրված է գրագետ, տեխնիկական հայերենով, 26 էջ ծավալով: Ներկայացված են նաև երկու գրախոսություն:

Առաջարկում եմ այն երաշխավորել տպագրության:

Արտահայտվեցին պրոֆ. պաշտ. Տ.Այվազյանը, դոցենտներ Մ.Աղաջանյանը, Ն.Օրդյանը, արհեստանոցի վարիչ Գ.Տաբիրյանը, ովքեր բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և երաշխավորեցին հրատարակման:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Բ. Խոդերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» երաշխավորել հրատարակման:

2. Դիմել Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Խորհրդին Բ. Խոդերյանի և Ա. Հարությունյանի համահեղինակած «Լաբորատոր աշխատանքների ուղեցույցը» տպագրության երաշխավորելու խնդրանքով:

Նիստի նախագահ՝ Ս.Ռ.Վարդանյանը

քարտուղար՝ Հ.Փ.Հովհաննիսյանը:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 4

2019թ. սեպտեմբերի 27-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Classroom հարթակում 2019-2020ուսումնական տարում հեռական ուսուցման 2-րդ կուրսի դասընթացների կազմակերպման մասին:
2. Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի 1-ին միջանկյալ ստուգման քննական տոմսերի քննարկում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր.

Նիստին ներկա էին ամբիոնի 10 անդամներ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

3. ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուսումնական տարվա հեռակա ուսուցման 2-րդ կուրսի Classroom հարթակում էլեկտրոնային դասընթացների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան- Այս ուսումնական տարում Classroom էլեկտրոնային հարթակին են միանում նաև հեռակա ուսուցման 2-րդ կուրսերը: Ամբիոնը իրականացրել է թվով 6 դասընթացների էլեկտրոնային թղթապանակների ստեղծում և հրավիրել դասավանդող դասախոսներին:

Խնդրում եմ միանալ դասընթացներին և տեղադրել համապատասխան նյութերը՝ որպես վերջնաժամկետ է սահմանված ս/թ սեպտեմբերի 30-ը:

Արտահայտվեցին տեխ. գիտ. թեկն., դոցենտ Ս. Ռ. Վարդանյանը, դոցենտներ Ա. Հ. Հարությունյանը և Մ. Հ. Աղաջանյանը, ովքեր ներկայացրեցին հեռակա ուսուցման 2-րդ կուրսում իրենց կողմից դասավանդվող դասընթացների փաթեթները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-Կազմակերպել և իրականացնել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի թվով 6 դասընթացների էլեկտրոնային փաթեթների համալրում:

4. ԼՍԵՑԻՆ – Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի 1-ին միջանկյալ ստուգման քննական տոմսերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան-Այս կիսամյակում Տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների համար ուսումնական պլանով նախատեսված է դասընթացների տեսական ուսուցման 10 շաբաթյա ուսուցում: Ուստի անհրաժեշտություն է առաջացել ուս. տարվա 6-րդ շաբաթում իրականացնել միջանկյալ ստուգումներ:

Ամբիոնի նիստի քննարկմանն է ներկայացված առկա բակալավրական կրթության 4-րդ կուրսի 1-ին միջանկյալ ստուգման քննական տոմսները, որոնք կազմվել են նախապես հաստատված հարցաշարերով:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել առկա բակալավրիատի 4-րդ կուրսի 1-ին միջանկյալ ստուգման քննական տոմսերը՝ 27.09.2019թ-ով:



ՔԱՂՎԱԾՔ

2019թ. սեպտեմբերի 27-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի թիվ 4

նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուսումնական տարվա հեռակա ուսուցման 2-րդ կուրսի Classroom հարթակում էլեկտրոնային դասընթացների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան- Այս ուսումնական տարում Classroom էլեկտրոնային հարթակին են միանում նաև հեռակա ուսուցման 2-րդ կուրսերը: Ամբիոնը իրականացրել է թվով 6 դասընթացների էլեկտրոնային թղթապանակների ստեղծում և հրավիրել դասավանդող դասախոսներին:

Խնդրում եմ միանալ դասընթացներին և տեղադրել համապատասխան նյութերը՝ որպես վերջնաժամկետ է սահմանված ս/թ սեպտեմբերի 30-ը:

Արտահայտվեցին տեխ. գիտ. թեկն., դոցենտ Ս. Ռ. Վարդանյանը, դոցենտներ Ա. Հ. Հարությունյանը և Մ. Հ. Աղաջանյանը, ովքեր ներկայացրեցին հեռակա ուսուցման 2-րդ կուրսում իրենց կողմից դասավանդվող դասընթացների փաթեթները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-Կազմակերպել և իրականացնել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի թվով 6 դասընթացների էլեկտրոնային փաթեթների համալրում:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 5

2019թ. հոկտեմբերի 11-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը:
3. Լաբորատորիաների վիճակի քննարկումը:
4. Ամբիոնի աշխատակիցների կողմից կատարվող գիտական աշխատանքների քննարկումը:
5. Միջանկյալ քննությունների նախապատրաստում:
6. Ընթացիկ հարցեր:
   6.1 Բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման չափանիշների և չափորոշիչների քննարկում:

Նիստին ներկա էին ամբիոնի բոլոր անդամներ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ, խնդրում եմ ներկայացրեք ուսումնական գործընթացների ընթացքը:

2) Բ.Խոդերյան-Այս ուսումնական տարում դասավանդում եմ թվով 4 դասընթաց, որից 2-ը բակալավրիատում, և 2-էլ մագիստրատուրայում: Պարբերաբար բացակայող ուսանողներ չկան: Ընդհանուր առմամբ ամեն ինչ կարգին է:
3) Տ.Այվազյան-Ես դասավանդում եմ 2 դասընթացներ բակալավրիատում՝ կիրառական մեխանիկա, էլեկտրատեխնիկա, 1 ընտրովի դասընթաց մագիստրատուրայում: Ինձ մոտ նույնպես ամեն ինչ կարգին է:
4) Ն. Օրդյան-Այս կիսամյակում դասավանդում եմ 3 առարկա: Գործընթացները նորմալ ընթանում են: Թերացումներ չկան:
5) Ա.Հարությունյան-Դասավանդում եմ 4առարկա, որից մեկը մագիստրատուրայում է, 3-ը՝ բակալավրիատում: Որևէ խնդիր չկա:

6) Մ.Աղաջանյան-Ես դասավանդում եմ 2 դասընթաց միայն բակալավրիատում: Խնձ մոտ ևս խնդիրներ չկան: Ամեն ինչ կարգին է:
7) Ս.Վարդանյան-Դասավանդում եմ թվով 4 դասընթաց: 2-ը բակալավրիատում, 2-ը մագիստրատուրայում: Ուսումնական գործընթացները նորմալ ընթանում են: Հաճախումներից գոհ եմ:
8) Ա.Սահրադյան- Այս կիսամյակում ունեմ 1 դասընթաց՝ «Մեքենաշինության տեխնոլոգիա»՝ բակալավրիատի 4-րդ կուրսում: Ինձ մոտ նույնպես ամեն ինչ կարգին է:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – 2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան-Խնդրում եմ գիտական ղեկավարներին ներկայացնել 2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը:

2) Ն.Օրդյան-Իմ ղեկավարությամբ աշխատում է Իննա Հակոբյանը, ով բավական մեծ աշխատանք է կատարել: Կարծում եմ հետագայում էլ որևէ խնդիր չի առաջանա:
3) Մ.Աղաջանյան- Ինձ մոտ Սուսաննա Մկրտչյանն է մագիստրոսական աշխատանք կատարում: Նա ակտիվ աշխատում է:
4) Տ. Այվազյան-Իմ ղեկավարությամբ թեզ է կատարում Աշխեն Հովսեփյանը: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
5) Բ.Խոդերյան-Ես ղեկավարում եմ Նառա Աբաղյանին: Աշխատանքը նորմալ ընթանում է:
6) Ա.Սահրադյան-Իմ ղեկավարությամբ աշխատում է Ֆլորա Մարտիրոսյանը: Արդեն բավականին գործ է արել: Այժմ նախապատրաստվում է աշխատանքի հետազոտական մասի՝ մետաղների դեֆորմացման արդյունքում կծկման գործակցի որոշման փորձերի կատարմանը: Կարծում եմ որևէ խնդիր չի լինի:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կուրսի մագիտրոսական թեզերի կատարման ընթացքը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ – Լաբորատորիաների վիճակի քննարկումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան- Խնդրում եմ ներկայացրեք լաբորատորիաների վիճակ:

2) Հ.Հովհաննիսյան-Այս կիսամյակում 404 լաբորատորիայում իրականացվում է «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» և «Էլեկտրատեխնիկա» դասընթացների լաբորատոր պարապմունքները: Նախապես նախապատրաստվում են փորձասարքերը և համապատասխան նյութերը: Որևէ խնդիր չկա:

3) Գ. Տաբիրյան- Արհեստանոցներում դասընթացներն ընթանում են նորմալ: Հաստոցներն ու սարքավորումները գտնվում են սարքին վիճակում:

4) Մ.Սոսյան-Որպես ուսումնական վարպետ նախապատրաստում եմ լաբորատոր փորձերի սարքավորումները և հսկում եմ ուսանողների անվտանգությունը հաստոցների վրա աշխատելիս:

5) Կ. Զաքարյան-Ես սպասարկում եմ 407 հիդրավլիկա և ջերմատեխնիկա առարկաների լաբորատորիաները: Ինձ մոտ ևս ամեն ինչ նորմալ է, թերացումներ չկան:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Լաբորատորիաների վիճակը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի աշխատակիցների կողմից կատարվող գիտական աշխատանքների քննարկումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան- Ամբիոնում 2019թ ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել է թվով 4 գիտական հոդված, 1 ուսումնամեթոդական ուղեցույց, իսկ 5 դպրոցական դասագրքեր էլ վերահրատարակվել են (ցանկը կցվում է):

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Տեղեկությունն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ – Միջանկյալ քննությունների նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան-Բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի և մագիստրատուրայի 1-ին, 2-րդ կուրսերի առաջին միջանկյալ ստուգումներն ըստ հաստատված ժամանակացույցի նախատեսվում է կազմակերպել հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ: Առաջարկում եմ առաջին միջանկյալ ստուգման

քննատոմսերն ու տարբերակները հաստատել այսօրվա ամբիոնի նիստով՝ 11.10.2019թ.:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Միջանկյալ քննությունների քննատոմսերն ու տարբերակներն հաստատել 11.10.2019թ.:

6. ԼՍԵՑԻՆ – Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ – Բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման չափանիշների և չափորոշիչների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կողմից ստացված թվով 4 հավելվածներ, որոնք հիմնականում վերաբերում են բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման չափանիշներին և չափորոշիչներին:

Արտահայտվեցին Ա.Սահրադյանը, Ս.Վարդանյանը, Տ.Այվազյանը, Բ.Խոդերյանը, Ն.Օրդյանը, Ա.Հարությունյանը, Մ.Աղաջանյանը, ովքեր բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և հանդես եկան առաջարկություններով:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ- Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչություն ներկայացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներքոնշյալ առաջարկությունները.

- Հավելված 1
  - ✓ Մագիստրոսկան թեզի գնահատման 2-րդ չափանիշի 2.1 չափորոշիչը, այն է՝ «Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան» վերաձևակերպել «Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ առաջադրված խնդիրներին համապատասխան»:
  - ✓ Ավարտական աշխատանքի գնահատման 4-րդ չափանիշի 4.1 և 4.2. չափորոշիչները կարելի է համալրել մագիստրոսական թեզի 4.3 և 4.4 չափորոշիչներով, քանի որ երկուստեք ընդհանրական են և կիրառելի:
- Հավելված 2 և 3

- ✓ Ազգային շրջանակի նկարագրիչների և ավարտական աշխատանքի չափորոշիչների համադրման էլեկտրոնային փաստաթղթում բացակայում են 1.2, 2.2 և 3.2 չափորոշիչները, գուցե համակարգչային խնդիր է: Նույնն առկա է նաև ազգային շրջանակի նկարագրիչների և մագիստրոսական թեզի չափորոշիչների համադրանման փաստաթղթում. այստեղ բացակայում են 1.2, 2.1, 2.3, 3.2 և 4.3 չափորոշիչները:

- Հավելված 4

✓ Հարցաթերթիկում կարելի է միավորել 4-րդ՝ «Բակալավրի ավարտական աշխատանքի/ Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները» և 6-րդ՝ «Բակալավրի ավարտական աշխատանքի/ Մագիստրոսական թեզի ձևավորման պահանջները» կետերը և վերաձևակերպել, իսկ որպես հիմքեր համապատասխանաբար հղում անելով Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման կարգը (նախագիծ. կետ 2) և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում մագիստրոսի կրթական ծրագրով իրականացվող կրթական ծրագրի կարգը (կետ 7):

- ✓ Հարցաթերթիկի 5-րդ կետում բացակայում է մագիստրոսական թեզին հատկացված մասը:
- ✓ 7-րդ կետը, այն է՝ «Մագիստրոսական թեզի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները», սահմանված է և՛ ավարտական աշխատանքի, և՛ մագիստրոսական թեզի համար, ուստի առաջարկում ենք վերաձևակերպել՝ «Բակալավրի ավարտական աշխատանքի/ Մագիստրոսական թեզի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները»: Թեև այս կետը նույնպես առնչվում է վերը նշված 6-րդ կետին:
- ✓

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 6

2019 թ. հոկտեմբերի 22-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքը:
2. Մանկավարժական պրակտիկաների ընթացքը:
3. Հեռակա ուսուցման բաժնի ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի տասն անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Սահրադյան Ա. - Խնդրում եմ ներկայացրեք ուսումնական գործընթացների վիճակը:

9) Խոդերյան Բ. - Դասավանդում եմ բակալավր 3-րդ, 4-րդ կուրսերին, ինչպես նաև մագիստր 1-ին և 2-րդ կուրսերին: Ամեն ինչ նորմալ է:
10) Աղաջանյան Մ. - Դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստր 1-ին կուրսերին, նաև ղեկավարում եմ բակալար 4-րդ կուրսի «Ա» խմբի մանկավարական պրակտիկան: Խնդիրներ չկան:
11) Հարությունյան Ա. - Դասավանդում եմ 1-ին կուրսերին և բակալավր 4-րդ կուրսին, ովքեր այժմ մանկավարժական պրակտիկա են անցնում: Ես էլ ղեկավարում են 4-րդ կուրսի «Բ» խմբի մանկավարական պրակտիկան: Որևէ խնդիր չկա:
12) Այվազյան Տ. - Ես դասավանդում եմ բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերին: Ինձ մոտ նույնպես ամեն ինչ կարգին է:
13) Օրդյան Ն. - Դասավանդում եմ բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերին: Գործընթացները նորմալ ընթանում են: ՈՒսանողները նորմալ հաճախում են:
14) Վարդանյան Ս. - Դասավանդում եմ բակալավրիատի 1-ին, 3-րդ, 4-րդ և մագիստրատուրայի 1-ին, 2-րդ կուրսերին: Հաճախումներից գոհ եմ: Ուսումնական գործընթացները նորմալ են:

15) Սահրադյան Ա. - Այս կիսամյակում ունեմ մեկ դասընթաց բակալավրիատի 4-րդ կուրսում: Ինձ մոտ նույնպես ամեն ինչ կարգին է:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկաների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Սահրադյան Ա. - Դոցենտ Խոդերյան, ներկայացրեք խնդրեմ, մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին:

2) Խոդերյան Բ. - Տեխնոլոգիական կրթության ամբիոնը կազմակերպում և իրականացնում է «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ՄԿԾ-ներով նախատեսված մանկավարժական, ուսումնական, մանկավարժահետազոտական և հետազոտական պրակտիկաները:

Առաջին կիսամյակում «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության 3-րդ կուրսի թվով 9 ուսանողների մանկավարժական շարունակական պրակտիկան անց է կացվում ՀՊՄՀ-ի թիվ 57 հենակետային դպրոցում, մեթոդիստն է դոցենտ Ա. Հ. Հարությունյանը, իսկ 4-րդ կուրսի թվով 29 ուսանողների մանկավարժական ակտիվ պրակտիկան՝ Երևանի թիվ 194 դպրոցում՝ 07.10-18.11.2019 թ., մեթոդիստներն են դոցենտներ Մ.Հ. Աղաջանյանը, Ա. Հ. Հարությունյանը և Ս.Ռ. Վարդանյանը:

Մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվելու է Տեխնոլոգիական կրթության ամբիոնում՝ 11.11-29.11.2019 թ., գիտական ղեկավարների հետ:

Քննարկման արդյուքնում

ՈՐՈՇԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկաների ընթացքը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման բաժնի ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Սահրադյան Ա. - 2019-2020 ուսումնական տարում «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի ավարտական կուրսի թվով 15 ուսանողներից 13-ը ավարտական աշխատանք

կատարելու իրավունք ունեն Տեխնոլոգիական կրթության ամբիոնում, իսկ 2-ը՝ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում:

Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ղեկավարների կողմից ներկայացված ավարտական աշխատանքների թեմաները.

1. «Նյութագիտություն» դասընթացի «Պղնձի ստացման տեխնոլոգիայի ժամանակակից մեթոդները» թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում (ղեկավար՝ Ա. Սահրադյան):
2. «Հայկական խոհանոցի առանձնահատկությունները» թեմայի դասավանդումը միջին դպրոցում (ղեկավար՝ Բ. Խոդերյան):
3. «Կաթով և կաթնամթերքով կերակրատեսակների պատրաստումը» թեմայի դասավանդումը 6-րդ դասարանում (ղեկավար՝ Բ. Խոդերյան):
4. Հայկական ավանդական ծիսական տիկնիկների պատրաստման տեխնոլոգիական եղանակները և դրա դասավանդումը արտադասարանական պարապմունքների ընթացքում (ղեկավար՝ Ն.Օրդյան):
5. Գրաֆիկական դիզայնի արտադասարանական պարապմունքները դպրոցում որպես աշակերտների գեղագիտական հմտությունների զարգացման միջոց (ղեկավար՝ Ն. Օրդյան):
6. Մեքենամասերի լծորդվող մակերևույթների գրաֆիկական կառուցման եղանակները որպես «Մեքենաշինական գծագրություն» դասընթացի խնդիրների պարզեցման միջոց (ղեկավար՝ Ս.Վարդանյան):
7. «Երիթային և շլիցային միացումներ, դրանց թույլտվածքներն ու նստեցվածքները» թեմայի դասավանդումը նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունում՝ կրթական ակտիվ մեթոդների կիրառմամբ (ղեկավար՝ Ս. Վարդանյան):
8. «Ժամանակակից շարժիչների սնման համակարգը» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ՏՀՏ-ների կիրառմամբ (ղեկավար՝ Տ. Այվազյան):

9. «Փայտանյութի մեխանիկական մշակում» թեմայի դասավանդման մեթոդիկան 7-րդ դասարանում (ղեկավար՝ Հ. Հարությունյան):
10. «Ասեղնագործությունը որպես դեկորատիվ կիրառական արվեստի տեսակ» թեմայի դասավադման մեթոդիկան միջին դպրոցում (ղեկավար՝ Մ. Աղաջանյան):
11. «Բանջարեղենի նշանակությունը մարդու սննդում» թեմայի դասավանդման մեթոդիկան 6-րդ դասարանում (ղեկավար՝ Մ. Աղաջանյան):
12. «Դեկորատիվ ներկում և երանգավորում» թեմայի դասավանդման մեթոդիկան 5-րդ դասարանում (ղեկավար՝ Ա. Հարությունյան):

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել 2019-2020 ուստարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաները:

Նիստի նախագահ՝ Ա.Ի. Սահրաղյան

Քարտուղար՝ Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 7

2019 թ. դեկտեմբերի 2-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքը:
2. ASPU Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում Տեխնոլոգիական կրթության ամբիոնի դասընթացների մշտադիտարկման մասին:
3. Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:
4. Հեռակա բակալավրի 2019-2020 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կուրսի ուսումնական գործընթացի ժամանակացույց՝ առցանց և առերես իրականացմամբ:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի ինն անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1/ Սահրադյան Ա.-Խնդրում եմ ներկայացրեք ուսումնական գործընթացների վիճակը:

2/ Խոդերյան Բ. – Ընդհանուր առմամբ ուսումնական գործընթացը ընթանում է նորմալ: 4-րդ կուրսի ուսանողները վերադարձել են մանկավարժական պրակտիկայից:

3/ Հարությունյան Ա. - Դասավանդում եմ 1-ին կուրսին և բակալավր 4-րդ կուրսին: Որևէ խնդիր չկա: ՈՒսանողները նորմալ հաճախում են:

4/ Օրդյան Ն. - Դասավանդում եմ բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերին: Այս ընթացքում փոխարինել եմ նաև պարոն Սահրադյանին, ով դասախոսում էր 4-րդ կուրսերին՝ «Մեքենաշինության տեխնոլոգիա» դասընթացը: Գործընթացները նորմալ ընթանում են:

5/ Վարդանյան Ս.-Դասավանդում եմ բակալավրիատի 1-ին, 3-րդ, 4-րդ և մագիստրատուրայի 1-ին, 2-րդ կուրսերին: Հաճախումներից գոհ եմ: Ուսումնական գործընթացները նորմալ են:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ - ASPU Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում Տեխնոլոգիական կրթության ամբիոնի դասընթացների մշտադիտարկման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – 1) Ա.Սահրադյանը նշեց, որ Տեխնոլոգիական կրթության ամբիոնը 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում իրականացրել է 23 դասընթացների էլեկտրոնային փաթեթների ստեղծում առկա համակարգում և 8 դասընթաց՝ հեռակա համակարգում:

Էլեկտրոնային փաթեթներում որպես պարտադիր բաղադրիչներ ներառված են՝ առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ, ուսումնական նյութեր, հարցաշարեր: Մինչև կիսամյակի ավարտը նաև կլինեն էլեկտրոնային հանձնարարականներ բոլոր դասընթացներից:

Էլեկտրոնային դասընթացների մշտադիտարկում իրականացնելու նպատակով ամբինն առաջնորդվել է մշտադիտարկման ցուցիչներով (հավելված):

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Տեխնոլոգիական կրթության ամբիոնի առկա համակարգի էլեկտրոնային դասընթացների իրականացման մշտադիտարկման ցուցիչներ սահմանել.

- առարկայական նկարագրի առկայությունը,
- թեմատիկ տրոհման առկայությունը,
- ուսումնական նյութերի առկայությունը,
- ուսանողների ներգրավվածությունը (կցվածությունը) էլեկտրոնային ուսումնական դասընթացներին,
- հարցաշարերի առկայությունը,
- էլեկտրոնային հանձնարարության առկայությունը:

3. ԼՍԵՑԻՆ - Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյանը նշեց, որ Տեխնոլոգիական կրթության ամբիոնն ունի երկու հայցորդ՝ Աննա Հակոբյանը և Հասմիկ Այվազյանը: Նրանք հաշվետվություններ են ներկայացրել հայցորդական դպրոցում իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ (հաշվետվությունները կցվում են):

Աննա Հակոբյանը 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տպագրել է երկու գիտամեթոդական հոդված, որոնցից մեկը ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված պարբերականում: Այժմ աշխատում է ատենախոսական աշխատանքի

երկրորդ և երրորդ գլուխների վրա՝ իրականացնելով համապատասխան հետազոտություն, նաև պատրաստվում է տպագրել մեկ հոդված:

Հասմիկ Այվազյանը հաշվետու տարում հանձնել է անգլերենի մինիմումը, հետազոտական աշխատանքի շրջանակներում մասնակցել է հանրապետությունում տեղի ունեցած մի քանի կոնֆերանսների: Այժմ աշխատում է ատենախոսական աշխատանքի երկրորդ գլխի վրա:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ատեստավորել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Աննա Սամվելի Հակոբյանին:

2. Ատեստավորել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Հասմիկ Այվազյանին:

4. ԼՍԵՑԻՆ - Հեռակա բակալավրի 2019-2020 ուստարվա 1-ին և 2-րդ կուրսի ուսումնական գործընթացի ժամանակացույց՝ առցանց և առերես իրականացմամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ ըստ հեռակա բակալավրիատի 2019-2020 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կուրսերի ուսումնական գործընթացի ժամանացույցի անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային խորհրդատվություն և էլեկտրոնային հանձնարարականի տեղադրում էլեկտրոնային կրթական հարթակում՝ դեկտեմբերի 2-ից 6-ը ընկած ժամանակահատվածում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Իրականացնել հեռակա բակալավրի 2019-2020 ուստարվա 1-ին և 2-րդ կուրսի

ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները:

Նիստի նախագահ՝ Ա.Ի. Սահրադյան

Քարտուղար՝ Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 8

2019 թ. դեկտեմբերի 6-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ամբիոնի 2019 թ-ի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի տասն անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի 2019թ-ի տարեկան հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Սահրադյան Ա. – Հարգելի գործընկերներ, ձեր քննարկմանն եմ ներկայացնում Տեխնոլոգիական կրթության ամբիոնի 2019 թ. Տարեկան հաշվետվությունը:

Այսպիսով, հաշվետու տարում ամբիոնն իրականացրել է ինչպես ուսումնական, այնպես էլ ուսումնամեթոդական գործունեություններ և գիտահետազոտական աշխատանք:

Ուսումնական գործունեության հետ կապված ամբիոնն իրականացրել է տարեկան աշխատանքային պլանով նախատեսված ուսումնական աշխատանքներ, որոնք բխել են ամբիոնի կանոնակարգից և ռազմավարական ծրագրերից:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը, սպասարկելով «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողներին, կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան ընտրել է դասավանդման և ուսումնառության ժամանակակից ակտիվացնող կրթական մեթոդներ (ինտերակտիվ դասախոսություններ, քննարկումներ)՝ դասավանդման գործընթացը դարձնելով ուսանողակենտրոն: Բացի այդ Տեխնոլոգիական կրթության ամբիոնն իրականացրել է ակտիվ գործունեություն Classroom էլեկտրոնային կրթական հարթակում, ստեղծելով ուսումնական պլաններում ներառված դասընթացների էլեկտրոնային փաթեթներ: Դասընթացների էլեկտրոնային փաթեթները հագեցված են եղել ինչպես բուն մասնագիտական, այնպես էլ հավելյալ նյութերով:

Ուսանողների գնահատման համակարգում գործում է 100 միավորանոց սանդղակը:

Հաշվետու տարում ամբիոնն ունեցել է թվով 19 նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր: ՈՒսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան՝ ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով, ամբիոնի հինգ ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների լաբորատոր աշխատանքների ապահովման համար, ուսուցումը կազմակերպվել է ըստ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և թեմատիկ տրոհումների, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ ստուգումներով՝ գնահատման համակարգին համապատասխան: Բարձր մակարդակով իրականացվել են ուսումնական պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ: Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և պրակտիկայի պաշտպանության որակին: Պարբերաբար իրականացվում են դասալսումներ և ամբիոնի նիստերում քննարկում առանձին առարկաների դրվածքը:

Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել են ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել է ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ: Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին: Ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են դասալսումներ՝ ըստ նախապես հաստատված գրաֆիկի:

Վերամշակվել են ամբիոնի բակալավրիական և մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրերը, որոնք համապատասխանում են ՄԿԾ-ՈԱՇ համապատասխանեցման գործիքակազմին և ՈԱՇ-ի ներդրման և իրականացման մեխանիզմներին:

Ամբիոնի դասախոսական կազմի գիտական հետաքրքրություններն ու հետազոտական գործունեությունը իրականացվել է հետևյալ ուղղություններով.

1.տեխնոլոգիա առարկայի հիմնախնդիրները և դրանց լուծման միտումները,

2.տեխնոլոգիա առարկայի կապը բնագիտական այլ առարկաների հետ,

3. ռոբոտաշինական խմբակների դասավանդման մեթոդիկայի կատարելագործումը,

4.մակերևութային ճարտարագիտություն,

5.ժամանակակից կոմպոզիցիոն նյութերի ստեղծում:

Ամբիոնի դասախոսները այս խնդիրների շուրջ իրականացրել են հետազոտություններ և արդյունքները հրատարակել են տարբեր ձևաչափերով (հոդվածներ, մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր):

Հաշվետու տարում ամբիոնի դասախոսները տպագրել են թվով 1 գիտական հոդված, 2 ուսումնական ձեռնարկ, 5 դասագիրք հանրակրթական դպրոցի համար, մասնակցել են 2 կոնֆերանսի՝ հանդես գալով զեկուցումներով:

Ամբիոնի կազմակերպած գիտական սեմինարները, տպագրած հոդվածները, ուսումնամեթոդական ձեռնարկները և դասագրքերը նպաստում են ամբիոնի գիտական մտքի զարգացմանը: Ամբիոնի դասախոսները համատեղ գիտահետազոտական աշխատանքներ են կատարում մագիստրատուրայի ուսանողների հետ:

Ամբիոնն ունի 2 հայցորդ, ովքեր իրենց ղեկավարի հետ համատեղ իրականացրել են հետազոտական աշխատանք և հաշվետվության տեսքով ներկայացրել ամբիոնի գիտական սեմինարի ժամանակ:

Ամբինում կազմակերպվել է թվով 6 գիտական սեմինար՝

● առկա ուսուցման 4-րդ կուրսի և հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների կատարման մասին հանդես գալով զեկուցումներով,

● 1-ին և 2-րդ կուրսերի մագիսրանտների մագիստրոսական թեզերի զեկուցում,

● ամբիոնի դասախոսների գիտական զեկուցումներ,

● ամբիոնի հայցորդների ատեստավորում:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը զարգացնում է համագործակցությունը արտասահմանյան մասնագիտական կառույցների հետ՝ ապահովելով կրթական ծրագրերի իրականացումը: Ամբիոնը մեթոդական և հետազոտական ոլորտում համագործակցում է՝ Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանի «Կիևի Իգոր Սիկորսկի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ» (Ուկրաինա) և Վ.Ն. Բակուլի անվան գերկարծր նյութերի ինստիտուտի (Ուկրաինա) հետ:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը համագործակցում է հանրապետության գիտահետազոտական հիմնարկների՝

- ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի(ՖԿՊԻ) «Նյութագիտության» լաբորատորիայի հետ,
- ՀՊՃՀ -ի «Մետալուրգիայի և նյութագիտության» գիտական լաբորատորիայի հետ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ,
- Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հետ (Գիտական Խորհրդի և Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ գիտական և գիտամեթոդական ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ Ա.Սահրադյան)
- Национальный технический университет Украины «Киевский политехнический институт имени Игоря Сикорского»(А.И.Саградян в составе редакционной коллегии),
- Украина, Журнал научных трудов <<Социальное развитие и безопасность>>(А.И.Саградян в составе редакционной коллегии),
- Journal " Ukrainian Journal of Mechanical Engineering and Materials Science"(A.I.Sagradian in the editorial board),
- Ukrainian Journal of Scientific Papers "Social development and Security"(A.I.Sagradian in the editorial board:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը պարբերաբար հանդիպումներ է ունենում ՀՀ հանրակրթական դպրոցների աշակերտների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների հետ՝ ծանոթացնելով մասնագիտության դերին և նշանակությանը, մասնագիտության լայն հնարավորություններին և աշխատաշուկայի պահանջարկին: Հանրության շրջանում «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության մասին տեղակտվությունը տրամադրվում է նաև սոցիալական ցանցերի միջոցով (Facebook):

Ամբիոնի որակի հանձնախմբի կազմում ներգրավված են ամբիոնի վարիչը՝ որպես որակի համակարգող, ինչպես նաև մեկ դասախոս և մեկ ուսումնաօժանդակ կազմի աշխատակից՝ որպես որակի պատասխանատուներ:

Որակի ապահովման քաղաքականության դրույթներին համապատասխան Տեխնոլոգիական կրթության ամբիոնի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերը սպասարկում են Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության առկա և հեռակա համակարգով

սովորող ուսանողներին և ապահովում են նշված մասնագիտության ՄԿԾ-ների լիարժեք իրականացումը (ՀՊՄՀ-ի Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության կայք-էջ):

Առցանց ուսուցման կազմակերպման նկատառումներից ելնելով՝ Տեխնոլոգիական կրթության ամբիոնի որակի հանձնախումբն իրականացնում է ՄԿԾ-ներով նախատեսված դասընթացների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնամեթոդական փաթեթների, քննական հարցաշարերի և այլ նյութերի (ըստ անհրաժեշտության) քննարկում: Այնուհետև դրանք քննարկվում են ամբիոնի նիստերում և հաստատումից հետո միայն տեղադրվում են Google Classroom էլեկտրոնային հարթակ:

Դասավանդման գործընթացի վերահսկման և որակի ապահովման տեսակետից ամբիոնի վարիչն իրականացնում է դասալսումներ՝ ըստ հաստատված ժամանակացույցի: Դասալսումից անմիջապես հետո դասախոսը ծանոթանում է դիտարկման արդյունքներին և դասընթացի որակի բարձրացմանն ուղղված բարելավման առաջարկներին (վերջինների մասին գրառումներն առկա են դասալսումների մատյանում և դասալսման թերթիկների վրա): Ըստ այդ բարելավման առաջարկների հիմնականում մեծ խնդիր է իրենից ներկայացնում նյութատեխնիկական բազայի թարմացման և նոր լաբորատոր սարքավորումների ձեռք բերման գործընթացը:

Նախկին շրջանավարտների և ներկայիս ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման տեսակետից ամբիոնն իրականացնում է ակտիվ գործունեություն սոցիալական ցանցերի՝ մասնավորապես «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» ֆեյսբուքյան էջի միջոցով:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնն իր լավագույն, այն է՝ բարձր առաջադիմությամբ մագիստրանտներին և շրջանավարտներին ապահովում է աշխատանքով՝ հանրակրթական դպրոցներում: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն աշխատանքի է տեղավորել թվով 2 շրջանավարտի և 2 մագիստրանտի:

Ամբիոնի աշխատակիցներն ակտիվ մասնակցում են ՀՊՄՀ-ում և դրանից դուրս կազմակերպվող գիտաժողովներին և աշխատաժողովներին, ինչպես նաև ՈԱԱԿ-ում կազմակերպվող որոշ քննարկումների: Ամբիոնի դոցենտ, տեխ.գիտ.թեկնածու Ս.Ռ. Վարդանյանը մասնակցել է ՈԱԱԿ-ում կազմակերպված փորձագիտական բազայում

գրանցված մասնագետների համար կազմակերպված քառօրյա վերապատրաստումներին և ՈԱԱԿ-ում տեղի ունեցած բուհերի որակի ապահովման մասնագետների հերթական հանդիպմանը: Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են նաև Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում կայացած 12-րդ միջազգային կոնֆերանսին՝ «Scientometrics in Practice» խորագրով սեմինարին:

Ամբիոնի դոցենտ Ն.Ա. Օրդյանը իր ակտիվ գործունեությունն է ծավալել Երևան, Դիջիթեք Էքսպոի Հաբելյանական 14-րդ «Դիջիթեք Էքսպո» ցուցահանդեսին, նաև մասնակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում իրականացվող «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշչի և ծրագրի լրամշակման գործընթացին:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնի թվով երկու աշխատակից՝ դոցենտ Ս.Ռ. Վարդանյանը և հայցորդ Ա.Ս. Հակոբյանը մասնակցել են ՀՊՄՀ-ի 2-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներին:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Տեխնոլոգիական կրթության ամբիոնի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրաղյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 9

2019 թ. դեկտեմբերի 20-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:
2. Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:
3. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:
4. Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը:
5. Ուսումնաճանաչողական պրակտիկայի արդյունքների քննարկում:
6. 2019-2020 ոսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների մասին:
7. Ընթացիկ հարցեր
   7.1. Հեռակա 1-ին և 2-րդ կուրսերի էլեկտրոնային միջանկյալ ստուգումների կազմակերպման մասին:

Նիստին ներկա էին ամբիոնի տասն անդամ (ներկայաթերթը կցվում է):
Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական գործընթացների ընթացքն ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Ս.Վարդանյան - Դասավանդում եմ 1-ին բակալավր, 2-րդ մագիստրոսների մոտ: Դասընթացն ավարտել ենք, պատրաստվում են 2-րդ միջանկյալ գրավորների: Թերություններ չկան:
2) Օրդյան Ն.-4-րդ կուրսի հետ ավարտել ենք դասընթացը: 3-րդ կուրսում միջանկյալ քննություններ են: Ամեն ինչ նորմալ է:
3) Աղաջանյան Մ.-Ինձ մոտ էլ ամեն ինչ նորմալ է: Դասընթացն ավարված է: Սկսել ենք միջանկյալ գրավորները:
4) Հարությունյան Ա.-Ինձ մոտ էլ նուրնն է՝ ավարտվել է դասընթացը, պատրաստվում ենք
միջանկյալ գրավորների:
5) Խոդերյան Բ.-Ինձ մետ ամեն ինչ նորմալ է, բակալավրները պատրաստվում են միջանկյալ գրավորների, իսկ մագիստրոսի հետ աշխատում ենք դիպլոմային աշխատանքի վրա:
6)Սահրադյան Ա.-Ինձ մոտ մագիստրոս Մարտիրոսյան Ֆլորան է: Աշխատում է իր դիպլոմային աշխատանքի վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Ս.Վարդանյան - Բոլոր ծրագրերը կատարվել են ըստ նախատեսվածի: Բացթողումներ և թերացումներ չեն եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական ծրագրերի կատարման վիճակը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ – 2-րդ միջանկյալ և ամփոփիչ ստուգումների քննատոմսերի քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան - Ամբիոնի նիստի քննարկմանն է ներկայացված 2019-2020թ-ի առաջին կիսամյակի 2-րդ և ամփոփիչ ստուգումների քննական տոմսերն ու տարբերակները: Դրանք կազմված են ըստ առարկայական նկարագրերում առկա հարցաշարերի և համապատասխանում են չափանիշներին:

Առաջարկում եմ քննական տոմսերը հաստատել 20.12.2019թ-ով:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ - Քննական տոմսերն ու տարբերակները հաստատել 20.12.2019թ-ով:

4. ԼՍԵՑԻՆ – Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1)Գ.Տաբիրյան-Լաբորատոր դասերը կատարվում են նորմալ, թերացումներ չկան:

2) Հ.Հովհաննիսյան-404 լաբորատորիայում անց է կացվել ,,Կարի կոնստրուկտավորում և մոդելավորում,, առարկայի լաբորատոր դասերը: Դասերը ընթացել են նորմալ, թերացումներ չեն եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ –Լաբորատոր աշխատանքների կատարման վիճակը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ – Ուսումնաճանաչողական պրակտիկայի արդյունքների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Բ. Խոդերյան - 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկան ավարտվեց, որը անց է կացվել թիվ 57 հենակետային դպրոցում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ցուցաբերել են բարձր ակտիվություն: Մասնակցել են դասապրոցեսներին: Ընդհանու առմամբ արդյունքները գոհացուցիչ են:

ՈՐՈՇԵՑԻՆ – Որոշեցին ուսումնաճանաչողական պրակտիկայի արդյունքները համարել բավարար:

6. ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1)Ս.Վարդանյան-Ըստ գրաֆիկի պետք է լիներ 7 դասալսում, որից 5-ին ներկա է եղել Ա.Սահրադյանը, 2 –ին՝ ես: Կարծիքը բոլորի համար եղել է դրական, իհարկե թերություններ եղել են, սակայն՝ թեթև:
ՈՐՈՇԵՑԻՆ –Դասալսման ընթացքը համարել բավարար:

7. ԼՍԵՑԻՆ – Հեռակա 1-ին և 2-րդ կուրսերի էլեկտրոնային միջանկյալ ստուգումների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Ա.Սահրադյան- Հարգելի գործընկերներ կրթության էլեկտրոնային կառավարման բաժնից ստացել ենք գրություն, ըստ որի դեկտեմբերի 2-ից 6-ը պետք է classroom էլ. հարթակում տեղադրվի հեռակա բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերում դասավանդվոր առարկաների էլեկտրոնային խորհրդատվությունը և էլեկտրոնային հանձնարարականները: Խնդրում եմ ովքեր դասավանդում են տվյալ կուրսերում, տեղադրեն համապատասխան առարկաների էլեկտրոնային խորհրդատվությունը և էլեկտրոնային հանձնարարականները:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 10

2020 թ. հունվարի 17-ի կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի նիստ

Օրակարգում՝

1. Էլեկտրոնային ուսուցման գործառույթներին համապատասխան դասախոսների հաշվետվությունը:
2. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:
3. Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:
4. Հեռակա ուսուցման բաժնի 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների կատարման մասին:
5. 2-րդ կիսամյակի առարկաների քննարկում և հաստատում:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի տասն անդամ (ներկայաթերթը կցվում է):
Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային ուսուցման գործառույթներին համապատասխան դասախոսների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1)Աղաջանյան Մ.- Ինձ մոտ իմ կողմից դասավանդվող առարկաների ուսումնական փաթեթները պատրաստ են, բացառությամբ ընտրովի դասընթացի, այն էլ մինչև երկուշաբթի պատրաստ կլինի:

2)Խոդերյան Բ.- Ինձ մոտ բոլոր դասընթացները նորմալ են, էլեկտրոնային հարթակում դրված են բոլոր առարկաների և էլեկտրոնային դասընթացները և առաջադրանքները, որոնք նաև գնահատվել են: Որևէ խնդիր չկա:

3)Հարությունյան Ա.-Դասավանդում եմ առկա առկա 4-րդ, մագիստրոս 2-րդ կուրսերում: Էլեկտրոնային հարթակում դասընթացները կան, թեմաները և առաջադրանքները տեղադրված են:

4)Վարդանյան Ս.-Ունեցել եմ երեք դասընթաց առկայում, երկուսն էլ հեռակա կուրսերում: Դասընթացները իրականացվել են նորմալ, թեմաները տեղադրվել են Classroom հարթակում, ամեն ինչ նորմալ է:

5) Սահրադյան Ա.-Ինձ մոտ էլ ամեն ինչ կարգին է, դասավանդվող առարկաների էլեկտրոնային նյութերը տեղադրված են, բացթողումներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կատարված աշխատանքները համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ – 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Ա.Սահրադյան- Երկրորդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները անհրաժեշտ է վերանայել և հաստատել: Առաջարկում եմ ուսումնական փաթեթները հաստատել 17.01.2020 ամսաթվով:

ՈՐՈՇԵՑԻՆ –2րդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները հաստատել 17.01.2020 ամսաթվով:

3. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Աղաջանյան Մ-Դասավանդում եմ հեռակա 2-րդ կուրսում: Դասընթացները նորմալ են: Բացականեր կան, բայց քիչ:

2)Խոդերյան Բ.-Հեռակա դասընթացները նորմալ են, բացակայողները քիչ են:

3)Հարությունյան Ա-Ինձ մոտ էլ հեռակա դասընթացները նորմալ են:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման ուսումնական գործընթացների վիճակը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման բաժնի 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների կատարման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1)Ա.Սահրադյան-Ղեկավարում եմ 5-րդ կուրսի ուսանող Սերգեյ Հովսեփյանի ավարտական աշխատանքը: Ուսանողը աշխատում է իր դիպլոմային աշխատանքի վրա: Առայժմ արդյունքներից գոհ եմ:

2) Բ.Խոդերյան –Ես աշխատում եմ Սոնիկ Հովհաննիսյանի և Գայանե Թարխանյանի հետ: Աշխատանքները ընդանում են նորմալ:

3)Ն.Օրդյան-Իմ ղեկավարությամբ իրենց ավարտական աշխատանքներն են կատարում Փնջիկ Անդրեասյանը և Կարինե Մկրտչյանը: Առայժմ խնդիրներ չկան:

4)Ս.Վարդանյան-Ես աշխատում են Աշոտ Մուրադյանի և Գոհար Սողոմոնյանի հետ: Արդյունքներից գոհ եմ:

5)Ա.Հարությունյան- Ինձ մոտ իր դիպլոմային աշխատանքն է կատարում Ռուզաննա Նազարյանը, ում աշխատանքից գոհ եմ:

6)Մ.Աղաջանյան – Իմ դիպլոմնիկներն են Մարիամ Մելքոնյանը և Գայանե Մանուկյանը: Աշխատանքները ընդացքի մեջ են:

7)Տ.Այվազյան-Ես էլ ղեկավարում եմ Արսեն Գասպարյանի դիպլոմային աշխատանքը: Ամեն ինչ նորմալ է:

ՈՐՈՇԵՑԻՆ –Դիպլոմային աշխատանքների կատարման կարգը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ- 2-րդ կիսամյակի առարկաների քննարկում և հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) 1) Սահրադյան Ա.Ի. - 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ամբիոնը դասընթացների կազմակերպման համար կրթության

էլեկտրոնային հարթակում (Google Classroom) ստեղծել է թվով 27 դասընթաց, 1 ուսումնական պրակտիկա:

Դասախոսները ամբիոնի քննարկմանն են ներկայացրել իրենց կողմից դասավանդվող դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները:

Արտահայտվեցին ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., պրոֆ. պաշտ. Տ.Մ.Այվազյանը, տեխ. գիտ. թեկն., դոցենտներ Ն. Ա. Օրդյանը, Ս. Ռ. Վարդանյանը, Բ.Ա. Խոդերյանը, դոցենտներ Ա. Հ. Հարությունյանը, Մ. Հ. Աղաջանյանը, ովքեր ներկայացրեցին երկրորդ կիսամյակում իրենց կողմից դասավանդվող դասընթացների փաթեթները:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնամեթոդական փաթեթները:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն h. 11

2020թ. փետրվարի 7-ի կայացած Տեխնոլոգիական կրթության

ամբիոնի նիստ

Օրակարգում՝

1. Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
զեկ. Ս.Վարդանյան
2. 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին /դասացուցակներ, էլեկտրոնային հարթակուն դասընթացների տեղադրումը՝ ուսումնական փաթեթներ, հարցաշարեր/ :
3. Ուսումնական լաբորատորիաների վիճակը:
զեկ. Տաբիրյան Գ., Զաքարյան Կ., Հովհաննիսյան Հ.:
4. “Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը /հեռակա և առկա բաժնի համար/:
զեկ. Ս.Վարդանյան
5. 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:
6. Հեռակա ուսուցման 3-րդ և 5-րդ կուրսերի 10.02.2020թ-ից մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին:
զեկ. Բ.Խոդերյան
7. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի տասն անդամ (ներկայաթերթը կցվում է):
Միաձայն հաստատվեց օրակարգը:

1) ԼՍԵՑԻՆ- Առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Առաջին կիսամյակում անբավարար են ստացել 2-րդ կուրսի մագիստրանտ Իննա Հակոբյանը՝ երկու առարկայից, 3-րդ կուրս բակալավր Մկրտչյան Անահիտը՝ չի ներկայացել մանկավարժական պրակտիկայի և կուրսային նախագծի պաշտպանություններին, Մանուկյան Լիաննան ունի 3 առարկայից անբավարար գնահատական, 4-րդ կուրսի ուսանողուհի Աղլոյան Մարիամը՝ 4 առարկայից անբավարար գնահատական:

ՈՐՈՇԵՑԻՆ- Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

2) ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին /դասացուցակներ, էլեկտրոնային հարթակում դասընթացների տեղադրումը՝ ուսումնական փաթեթներ, հարցաշարեր/ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Այս կիսամյակի դասացուցակը արդեն պատրաստ է, բոլոր դասախոսները տեղեկացված են, դասացուցակը փակցված է:

Հ.Հովհաննիսյան-Բոլոր առարկաների էլեկտրոնային դասընթացները պատրաստ են, տեղադրված են էլ. հարթակում: Տեղադրված են նաև բոլոր առարկաների թեմատիկ տրոհումները, առարկայական նկարագրերը, դասընթացների թեմաները և առաջին միջանկյալ ստուգման հարցաշարերը: Բացթողումներ չունենք:

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների կատարման վիճակը համարել բավարար:

3) ԼՍԵՑԻՆ- Ուսումնական լաբորատորիաների վիճակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)-Գ.Տաբիրյանը-Այս կիսամյակում ուսումնական արհեստանոցում կլինեն «Ժող. զեղ. արհեստներ», «Աշխատանքի պաշտպանություն», «Կոնստրուկցիոն նյութերի տեխնոլոգիա», «Տեխնիկական առարկաների դասավանդման մեթոդիկա» , «Կտրման տեսություն, մետաղահատ հաստոցներ» առարկաների լաբորատոր պարապմունքները: Ամեն ինչ պատրաստ է դասապրոցեսները սկսելու համար:

2) Կ.Զաքարյան-407 լաբորատորիայում կլինեն «Հիդրավլիկա և ջերմոտեխնիկա» առարկայի լաբորատոր պարապմունքները: Լաբորատոր փորձերի համար բոլոր փորձասարքերը պատրաստ են:

3) Հ.Հովհաննիսյան-Այս կիսամյակում 404 լաբորատորիայում լինելու են «Սննդի պատրաստման տեխնոլոգիա», «Ռադիոէլեկտրոնիկա և ռադիոմոնտաժման պրակտիկում» և «Ավտոմատիկա և կենցաղային սարքավորումներ» առարկաների լաբորատոր պարապմունքները: «Սննդի պատրաստման տեխնոլոգիա»-ի համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պարագանեչը, իսկ Ռադիոէլեկտրոնիկա և ռադիոմոնտաժման պրակտիկում» և «Ավտոմատիկա և կենցաղային սարքավորումներ» առարկաների համար՝ լաբորատոր աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Լաբորատորիաների և լաբորատոր աշխատանքների վիճակը համարել բավարար:

4) ԼՍԵՑԻՆ-“Կիրառական մեխանիկա” առարկայի կուրսային նախագծերի թեմաների հաստատումը և առաջադրանքների բաշխումը /հեռակա և առկա բաժնի համար/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Այս կիսամյակում կուրսային նախագիծ ունեն կատարելու հեռակա 3-րդ և առկա 3-րդ կուրսի ուսանողները: Հեռակա կուրսի 3 ուսանողի ղեկավար է Ա.Սահրադյանը, 14 ուսանողի ղեկավար է դոցենտ Ս.Վարդանյանը: Տրված է նախագծել միաստիճան գլանական ռեդուկտոր: Իսկ առկա 3-րդ կուրսի ուսանողներից 2-ին հանձնարարված է նախագծել ուղղատամ գլանական ռեդուկտոր, իսկ 7–ին՝ հորիզոնական գլանական ռեդուկտոր:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել կուրսային նախագծերի թեմաներ և բաշխել ուսանողներին:

5) ԼՍԵՑԻՆ-2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկի հաստատումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Այս կիսամյակում ըստ գրաֆիկի դասալսումներ են իրականացվելու 9 անգամ՝ Բ.Խոդերյանի և Ս.Վարդանյանի մոտ երկուական անգամ, իսկ մյուս դասախոսների մոտ մեկական անգամ: /դասալսումների գրաֆիկը կցվում է/:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը:

6) ԼՍԵՑԻՆ- Հեռակա 3-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - 1) Բ.Խոդերյան-Պրակտիկայի բաժնի հետ համաձայնեցվել է կուրսերի պրակտիկայի գրաֆիկը: Պրակտիկայի վայրը ընտրելիս հաշվի է առնվել ուսանողների ցանկությունը: Պրակտիկան հիմնականում անց է կացվելու թիվ 194 դպրոցում, 10-12 ուսանող էլ իրենց պրակտիկան կանցկացնեն իրենց դպրոցներում՝ բերելով համապատասխան փաստաթղթեր և բնութագիրեր:

ՈՐՈՇԵՑԻՆ –Մանկավարժական պրակտիկայի խնդիրները խնդիրները համարել բավարար:



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն հ. 12

2020թ. փետրվարի 19-ի կայացած Տեխնոլոգիական կրթության

ամբիոնի նիստ

Օրակարգում՝

1. 2021-2025թթ. «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի ռազմավարական ծրագրի քննարկում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ամբիոնի անդամները (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1) ԼՍԵՑԻՆ-2021-2025թթ. «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի ռազմավարական ծրագրի քննարկման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյանը- Առաջարկում եմ քննարկել «Ռազմավարական ուղենիշներ և իրականացման պլան ժամանակացույց»-ը: Տեխնոլոգիապես գրագետ և պահանջարկ ունեցող ուսուցիչների թողարկման գործում Տեխնոլոգիական կրթության ամբիոնն իր մեծ ավանդն է ներդնում ինչպես գիտական, այնպես էլ գործնական և փորձարարական ներուժով՝ ուսանողների կրթական ծրագրերի իրականացման գործընթացում:

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Տեխնոլոգիական կրթության ամբիոնը «Տեխնոլոգիա և Ձեռնարկչություն» մասնագիտության շրջանակներում պատրաստում է «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչներ, ովքեր ի զորու են դասավանդել ավագ դպրոցների տնտեսագիտության ուղղվածությամբ հոսքերում՝ «Կիրառական տնտեսագիտություն» առարկան, ինչպես նաև մասնագիտական, տեխնիկական ուսումնարաններում և քոլեջներում, թե տեսական առարկաների և թե արտադրական ուսուցման արհեստանոցներում՝ ուսուցումը նպատակային և հմուտ կազմակերպելու համար:

Բնականաբար, դպրոցներում ռոբոտաշինական խմբակներում բարձր մակարդակով ուսուցման իրականացման համար անհրաժեշտ էր թե «Ռոբոտատեխնիկական համակարգեր» առարկայի և թե համապատասխան լաբորատորիայի ստեղծումը, որն այսօր ունի Տեխնոլոգիական կրթության ամբիոնը՝ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտությամբ մանկավարժների պատրաստման համար:

«Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության շրջանավարտներն իրենց նույնքան լավ են դրսևորում արդյունաբերության և տնտեսության տարբեր ճյուղերում:

Ամբիոնը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական և մանկավարժական հմտությունների անընդհատ աճի բարձրացմանը զուգընթաց, լուրջ ուշադրություն է դարձնում ուսանողության տեսական գիտելիքների ամրապնդմանը՝ լաբորատոր փորձերի գործնական կիրառմամբ, ուսումնական և մանկավարժական պրակտիկաների անցկացմամբ:

Մագիստրոսական ուսուցման ծրագրերին համապատասխան իրականացնում է գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաներ:

Ամբիոնը մեծ ուշադրություն է դարձնում երիտասարդ հերթափոխի պատրաստմանը՝ իր գերազանց շրջանավարտներից լավագույններին հրավիրելով աշխատանքի, միաժամանակ նրանց ներառելով գիտահետազոտական աշխատանքներում, որպես հայցորդ:

Քննարկման արդյունքում

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հաստատել «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի 2021-2025թթ.

ռազմավարական ծրագիրը (կցվում է):

2.Հաստատել «Ռազմավարական ուղենիշներ և իրականացման պլան ժամանակացույց»-ը (կցվում է):



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 13

2020թ-ի մարտի 25-ի,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով։
2. Google classroom հարթակի հնարավորությունների լիարժեք օգտագործումը։

Զեկ. Ն. Օրդյան

3. Միջանկյալ գրավորների իրականացման ընթացքը։

Զեկ. դասախոսներ

4. Բարելավման գործողությունների մասին։

Զեկ. Ս.Վարդանյան

5. Ընթացիկ հարցեր։

Նարկա էին ամբիոնի 8 անդամ (ներկայաթերթը կցվում է)։

Միաձայն հաստատվեց օրակարգը։

1.ԼՍԵՑԻՆ- Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Առցանց դասընթացները կազմակերպվում են։ Բոլոր ուսանողները կցված են դացընթացներին։ Թերացումներ չկան։

2. Ա.Հարությունյան- Ինձ մոտ էլ նույն իրավիճակն է։ Դասընթացները իրականացվում է Google Mit ծրագրով։ Առայժմ ամեն ինչ կարգին է։

3.Ս.Վարդանյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում։ Ինձ մոտ էլ բոլոր ուսանողները կցված են դասապրոցեսին։ Բոլոր նյութերը տեղադրված են classroom հարթակում։ Դասապրոցեսի ժամանակ նորից բացատրվում է թեման, լինում են քննարկումներ։ Ամեն ինչ ընդանում է նորմալ։

4. Ն.Օրդյան- Ինձ մոտ էլ ուսանողները միացել են Google Mit-ով: Բացականեր չունենք: Թերացումներ նույնպես:

5. Տ.Այվազյան-Քանի որ այս շաբաթ միջանկյալ գրավորների շաբաթ էր, դեռ դասընթաց չենք իրականացրել, ինձ թվում է հաջորդ շաբաթ ամեն ինչ նորմալ կլինի:

6. Մ.Աղաջանյան-Ինձ մոտ էլ նույնն է, միջանկյալի շաբաթ է, դասապրոցեսը կսկսենք մյուս շաբաթվանից:

7.Ա.Սահրադյան-Բակալավրիատ 1-ին կուրսում իրականացվել է դասապրոցես նույն Google Mit ծրագրով: Իսկ բակալավրիատի 3-րդ կուրսում և մագիստրատուրա երկրորդ կուրսում իրականացվել է առաջին մնջանկյալ ստուգումներ գրավոր աշխատանքի տեսքով:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2.ԼՍԵՑԻՆ- Google classroom հարթակի հնարավորությունների լիարժեք օգտագործումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Քանի որ այս հարթակում աշխատանքայինգործիքները և հնարավորությունները շատ են, առաջարկում եմ դասապրոցեսի ժամանակ հնարավորինս ուսումնասիրել և օգտագործել այդ հնարավորությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Առաջարկը ընդունել և ի կատար ածել:

3. ԼՍԵՑԻՆ- Միջանկյալ գրավորների իրականացման ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1-Բ.Խոդերյան-Միջանկյալ գրավորների տարբերակները տեղադրված են, ուսանողները պատասխանները կուղարկեն և կգնահատվեն:

2-Տ.Այվազյան-Միջանկյալ գրավոր աշխատանք ունեմ բակալավր 3-րդ, 4-րդ և մագիստատուրա 1-ին կուրսում: Տարբերակները տեղադրված են համակարգում:

3.Մ.Աղաջանյան-Ինձ մոտ 4-րդ կուրսում միջանկյալը «Ներկայացում» տարբերակով է:

4.Ա.Հարությունյան-Ես նույնպես տեղադրել եմ իմ կողմից դասավանդվող առարկաների միջանկյալ տարբերակները: Ամեն ինչ կարգին է:

5.Ս.Վարդանյան-Ես նույնպես տեղադրել եմ միջանկյալ ստուգման տարբերակները: Գործընթացը իրականացվում է նորմալ:

Ա.Սահրադյան- Ինձ մոտ բոլոր քննական առարկաների միջանկյալ գրավորների տարբերակները տեղադրված են: Թերացումներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ- Միջանկյալ գրավորների իրականացման ընթացքը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ- Բարելավման գործողությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ

1. Գևորգյան Սրբուհի՝ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր
2. Վարդանյան Կամո՝ Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար
3. Ֆակուլտետների ղեկաների գիտության և միջազգային համագործակցության հարցերով տեղակալներ
4. Ամբիոնների վարիչներ
5. ՈՒսանողական գիտական ընկերություն

Աշխատանքային խմբի պատասխանատու՝

Վարդանյան Կամո՝ Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար

ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրսներ
4.Ներդնել մեխանիզմներ գիտահետազոտական գործունեության կապը ուսումնառության գործընթացի հետ սերտացնելու ուղղությամբ: Որդեգրել հստակ քաղաքականություն, համաձայն որի հետազոտական աշխատանքը կդառնա ուսումնառության մեթոդ՝ երաշխավորելով իրականացվող հետազոտության ընթացիկ և վերջնական արդյունքների կիրառությունն ուսումնական գործընթացում	Կանոնակարգի նախագծի մշակում, քննարկում, բարելավում և վերջնական տարբերակի ներկայացում	Պլանավորման փուլում է	Մարդկային և տեղեկատվական ռեսուրսներ

ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Վերջնարդյունք	Պատասխանատու թիմ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
Համապատասխան կանոնակարգի ստեղծում	Գիտահետազոտական կենտրոն, Ուսումնական մաս, Ամբիոններ	2023թ. III եռամսյակ	Արտաքին և ներքին շահակիցների դրական կարծիքներ

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Միհր Մելիք-Բախշյան՝ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր

2. Ավագյան Մկրտիչ՝ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ

3. Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի աշխատակազմ

4. ՀՊՄՀ ֆակուլտետների և ամբիոնների որակի ապահովման պատասխանատուներ

5. ՀՊՄՀ ուսանողական կազմակերպությունների որակի ապահովման պատասխանատուներ

Աշխատանքային խմբի պատասխանատու՝

Գևորգյան Մարիամ՝ Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրսներ	Վերջնարդյունք	Պատասխանատու թիմ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
Հստակեցնել և բարելավել տվյալների հավաքագրման, վերլուծման, համալսարանի տարբեր ստորաբաժանումների միջև տվյալների տարածման գործընթացները:	1.Գնահատել և բարելավել ՀՊՄՀ-ում հարցումների անցկացման կարգը:	Պլանավորվում է իրականացնել	Մարդկային ռեսուրսներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ	ՀՊՄՀ հարցումների անցկացման նոր կարգ:	ԿՈՆԵԿ բաժին, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն	2020թ.-ի երրորդ եռամսյակ:	1.Գիտական խորհրդի կողմից հաստատված կարգ:
	2. Ստեղծել ՀՊՄՀ ստորաբաժանումների միջև տվյալների տարածման միասնական էլեկտրոնային համակարգ:		Մարդկային ռեսուրսներ	Տվյալների տարածման միասնական էլեկտրոնային հարթակի ընդլայնում:	Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	2020թ.-ի երկրորդ եռամսյակ	2. ՀՊՄՀ-ում կիրառվող տվյալների տարածման միասնական համակարգի առկայություն:
	3.Ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններում ներառել քայլեր տվյալների հավաքագրման և վերլուծության վերաբերյալ:			ՀՊՄՀ ստորաբաժանումների կողմից տվյալների հավաքագրման և վերլուծության վերաբերյալ պլանավորված քայլերով տարեկան աշխատանքային պլաններ:	ԿՈՆԵԿ բաժին, ստորաբաժանումների ղեկավարներ	2020թ-ի առաջին եռամսյակից մինչև 2020թ-ի չորրորդ եռամսյակ	3. Տարեկան աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն և վերլուծություն:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1. Մհեր Մելիք-Բախշյան՝ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր

2. Ավագյան Մկրտիչ՝ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ

3. Սարգսյան Վահան՝ Պրակտիկայի կենտրոնի ղեկավար

4.Արշակյան Շուշանիկ՝ Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժնի պետ

5. Առաքելյան Հասմիկ՝ Ուսանողական ակադեմիական հետագծի (շարժի) կազմակերպման բաժնի պետ

6. Սարգսյան Անուշ՝ Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի պետ

7. Ֆակուլտետների ՄԿԾ-ների մշտական պատասխանատուներ

8. Չարչյան Աննա՝ Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դասախոս

9. Համահամալսարանական ամբիոններ

Աշխատանքային խմբի պատասխանատու՝

Ավագյան Մկրտիչ՝ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը		Ռեսուրսներ	Վերջնարդյունք	Պատասխանատու թիմ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
2. Բարելավել դասավանդման, ուսումնառության մեթոդները և գնահատման համակարգը	4.Վերլուծությունների արդյունքների հիման վրա և գործող քաղաքականության շրջանակներում վերանայել ՀՊՄՀ-ում կիրառվող ծրագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդները:	Պլանավորվում է իրական ացնել	ՊԴԱ-ի ուսումնական գործընթացների կառավարման բաժին Որակի ապահովման բաժին Ամբիոնների վարիչներ Դասախոսներ	Ցուրաքանչյուր վերջնարդյունքին համապատասխան դասավանդման և ուսումնառության վերանայված մեթոդ	ՄԿԾ-ի ղեկավար Ամբիոնի վարիչ	2020թ. 2--րդ կիսամյակ	Վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդ ներ պարունակող ծրագրեր: Ուսանողների գոհունակության հարցում ներ կիրառվող մեթոդների արդյունավետության նից	
ՀՊՄՀ ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանեցում բենչմարքինգի արդյունքներին և ներքին ու արտաքին շահակիցների պահանջներին	1, Ամբիոններում ձևավորել ՄԿԾ-ների վերջնարդյունքների շահակիցների պահանջներին համապատասխանեցման աշխատանքային խմբեր	Պլանավորվում է իրական ացնել	Ամբիոնների վարիչներ ՄԿԾ-ների ղեկավարներ Դասախոսներ	Գործող աշխատանքային խմբեր	Ֆակուլտետի մեթոդական խորհուրդ	2020թ. 1-ին կիսամյակ	Ամբիոնների նիստերի և աշխատանքային խմբերի արձանագրություններ	

ՈՐՈՇԵՑԻՆ-Տեղեկությունն ընդունել ի գիտություն և ամբիոնի որակի պատասխանատուին հանձնարարվեց զբաղվել այդ հարցով:

Նիստի նախագահ՝ Ա.Ի. Սահրադյան

Քարտուղար՝ Ս.Ռ. Վարդանյան

Արձանագրություն 14

2020թ-ի ապրիլի 2-ի ,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով:

զեկ. դասախոսներ

2. Ընթացիկ հարցեր:

- Ուսանողների վարձավճարների մասին:

Նարկա էին ամբիոնի 8 անդամ (ներկայաթերթը կցվում է):
Ներկա էր նաև ֆակուլտետի դեկան Գ. Դեմիրխանյանը, նաև կուրսերի ավագները:

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1.ԼՍԵՑԻՆ- Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Առցանց դասընթացները կազմակերպվում են: Բոլոր ուսանողները կցված են դացընթացներին: Ցուցադրվում է սահիկահանդես: Թերացումներ չկան:
2. Ա.Հարությունյան- Ինձ մոտ էլ ամեն ինչ կարգին է: Դասընթացները իրականացվում է Google Mit ծրագրով:
3. Ս. Վարդանյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ բոլոր ուսանողները կցված են դասապրոցեսին: Բոլոր նյութերը տեղադրված են classroom հարթակում: Ամեն ինչ ընդանում է նորմալ:
4. Ն. Օրդյան- Ինձ մոտ էլ ուսանողները միացել են Google Mit-ով: Բացականեր չունենք: Թերացումներ նույնպես:
5. Տ. Այվազյան-Ինձ մոտ դասընթացները նորմալ են: Ուսանողները կցված են դասընթացներին: Բացականեր չունենք:
6. Մ.Աղաջանյան-Ինձ մոտ էլ դասերը ընդանում են նորմալ Google Mit ծրագրով: Թերացումներ չկան: Նյութերը տեղադրված են:
7. Ա. Սահրադյան-Ինձ մոտ էլ դասապրոցեսները իրականացվում են Google Mit ծրագրով: Ուսանողները բոլորը կցված են դասընթացին:
ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Ուսանողների վարձավճարների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1. Գ.Դեմիրխանյանը – Մեր ֆակուլտետում վարձավճարների հարցը լուրջ է: Ունենք շատ ուսանողներ, որոնք ունեն ֆինանսական պարտքեր: Այդ պարտքերը պետք է մարվի մինչև երկրորդ միջանկյալ քննությունները, հակառակ դեպքում չեն մասնակցի քննություններին: Վճարները կարող են կատարել նաև առցանց: Վճարման կարգը կարող եք տեսնել Ձեր aspu-mail-երում:

2. Սուսաննա-Ես մագիստրատուրա երկրորդ կուրսի ավագն եմ: Մեր կուրսում պարտքերը քիչ են: Մինչև միջանկյալները կվճարեն:

3. Էլեն Սամվելյան-Ես 4-րդ կուրսի ավագն եմ: Մեզ մոտ էլ պարտք ունեցող ուսանողները խոստացել են, որ մինչև քննությունները կվճարեն:

4. Կարինե Սարգսյան-Ես 3-րդ կուրսի ավագն եմ: Մեր կուրսի ուսանողները նույնպես խոստացել են մինչև քննությունների սկսվելը վճարները կատարեն: Կուսումնասիրեն առցանց վճարման կարգը և կկատարեն վճարումները:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հորդորել ուսանողներին մինչև միջանկյալ ստուգումների սկսվելը վարձավճարները վճարեն:



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15

2020թ-ի ապրիլի 10-ի ,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով: զեկ. դասախոսներ
2. Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ քննությունների մասին:
զեկ. Ն. Օրդյան
3. Հեռակա կուրսերի միջանկյալ տոմսերի հաստատման մասին:
զեկ. Ա.Սահրադյան
4. Մագիստրոս 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը:
զեկ. Բ.Խոդերյան
5. Բակալավր 3-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման ու անցկացման մասին: զեկ. Բ.Խոդերյան
6. Ընթացիկ հարցեր:
   - Բակալավր 4-րդ կուրսի և մագիստրատուրա 2-րդ կուրսի ավարտական աշխատանքների և ատենախոսությունների ատեստավորման մասին:
   զեկ. դասախոսներ

Նարկա էին ամբիոնի 8 անդամ(ներկայաթերթը կցվում է)։

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1.ԼՍԵՑԻՆ- Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Բ.Խոդերյան-Առցանց դասընթացները կազմակերպվում են նորմալ: Ուսանողները մասնակցում են դասերին: Մեկ-մեկ խնդիր լինում է ինտերնետի հետ կապված: Դասերը և ձայնագրվում են և նկարվում: Ամեն ինչ նորմալ է:

2). Ա.Հարությունյան- Ինձ մոտ էլ ամեն ինչ կարգին է: Դասընթացները իրականացվում է Google Mit ծրագր-ով: Դասավանդում եմ 1-ին, 4-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Ուսանողները բոլորը մասնակցում են դասերին: Բացակաները շատ քիչ են, այն էլ լինում է, երբ ինտերնետային կապի հետ խնդիր է լինում:

3). Ս. Վարդանյան- Ես դասավանդում եմ բակալավր 3-րդ կուրսում՝ գործնական-տեսական դաս, 4-րդ բակալավրիատում՝ լաբորատոր դաս և մագիստրատուրա 2-րդ կուրսերում: Ինձ մոտ էլ բոլոր ուսանողները կցված են դասապրոցեսին: Բոլոր նյութերը տեղադրված են: Բակալավրիատում դասի ընթացքը նկարում եմ և դասի ավարտից հետո տեղադրում հարթակում, իսկ մագիոսրոների դասերը ձայագրում եմ և դասից հետո կրկին տեղադրում հարթակում: 4-րդ կուրսում հաճախումները 50-60%-ով է իրականացվում, իսկ մնացած կուրսերի հաճախումներից գոհ եմ:

4). Ն. Օրդյան- Ունեմ շաբաթական մեկ մուտք: Դասերը ձայնագրվում են և տեղադրվում classroom-ում: Դժգոհություն չունեմ:
5). Տ. Այվազյան-Ինձ մոտ դասընթացներ է իրականացվում 3-րդ, 4-րդ բակալավրիատում և 1-ին մագիստրատուրայում: Դասախոսությունները ընդանում են նորմալ: Խնդիր կա լաբորատոր պարապմունքների վերաբերյալ: Նաև կան որոշ ուսանողներ, որոնք դեռևս չեն ուղարկել միջանկյալ գրավորները. Ավետիսյան Էդգար, Մելքոնյան Լիանա, Սողոմոնյան Մարինե: Մագիստրատուրայում ամեն ինչ նորմալ է:
6). Մ.Աղաջանյան-Ինձ մոտ էլ դասերը ընդանում են նորմալ: Թերացումներ չկան:
7). Ա. Սահրադյան-Ինձ մոտ նույնպես ուսանողները նորմալ մասնակցում են դասերին: Միակ թերությունը կապի վատ վիճակն է լինում:
ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ քննությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1).Ն. Օրդյան-Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ քննությունները նախատեսված են 13.04-15.04.2020թ.: Ուսանողները ունեն 6 առարկայից միջանկյալ գրավոր, որոնք իրականացվելու են առցանց տարբերակով: Կարծում եմ ամեն ինչ նորմալ կնդանա:
ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի 2-րդ միջանկյալ քննությունների կատարման կարգը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Հեռակա կուրսերի միջանկյալ տոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1).Ա.Սահրադյան-Քանի որ նախորդ միջանկյալ տոմսերի հաստատումը եղել է հունվար ամսին, առաջարկում եմ ներկայիս միջանկյալ ստուգման տոմսերը հաստատել 10.04.2020թ. ամսաթվով:
ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա կուրսերի միջանկյալ տոմսերը հաստատել 10.04.2020թ-ով:

4. ԼՍԵՑԻՆ- Մագիստրոս 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1). Բ.Խոդերյան- Մագիստրատուրա 1-ին կուրսերի ուսանողների պրակտիկայի վերաբերյալ գրությունը պատրաստ է և ուղարկված է պրակտիկայի բաժին: 1-ին կուրսի մագիստրոսների պրակտիկան սկսվելու է ապրիլի 13-ից և տևելու է երեք շաբաթ: Յուրաքանչյուր ուսանող կհրավիրվի որպես դասախոս իր ղեկավարի դասերին և կմասնակցի դասընթացին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մագիստրոս 1-ին կուրսերի պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը համարել բավարար:

5. ԼՍԵՑԻՆ- Բակալավր 3-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման ու անցկացման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1). Ն.Օրդյան- Բակալավր 3-րդ կուրսի պրակտիկան սկսվելու է ապրիլի 27-ից և տևելու է 6 շաբաթ: Ուսանողները օնլայն կցվելու են «Արմատ» լաբորատորիային և 3 շաբաթ այնտեղ անց է կացվելու պրակտիկան: Իսկ մյուս 3 շաբաթները պրակտիկան կանցկացվի բանկում:
ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկայի կազմակերպումն ու անցկացումը ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ- Բակալավր 4-րդ կուրսի և մագիստրատուրա 2-րդ կուրսի ավարտական աշխատանքների և ատենախոսությունների ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1).Բ.Խոդերյան- Ես ղեկավարում եմ բակալավրիատում Երեմյան Հասմիկի, Անտոնյան Սյուզաննայի, Հակոբյան Էմմայի, Խաչատրյան Մարիամի դիպլոմային աշխատանքները, իսկ մագիստրատուրայում Աբաղյան |Նառայի մագիստրոսական թեզը: Աշխատանքները կատարվում են:
2). Տ.Այվազյան-Ես բակալավրիատում ղեկավարում եմ Մանուկյան Լիանայի, Ներսիսյան Թագուհու և Ապրեսյան Վարսենիկի դիպլոմային աշխատանքները, որոնց ընթացքը նորմալ է: Մագիստրատուրայում ղեկավարում եմ Հովսեփյան Աշխենի մագիստրոսկան թեզը: Այստեղ նույնպես ամեն ինչ կարգին է:
3). Ն. Օրդյան-Ինձ մոտ դիպլոմային աշխատանքներ են կատարում բակալավրիատում Ադամյան Արմինեն, Հովհաննիսյան Ելենան, Ասատրյան Վիկտորիան, իսկ մագիստրատուրայում՝ Հակոբյան Իննան: Աշխատանքների 80%-ից ավելին կատարված է: Պաշտպանությանը ամեն ինչ պատրաստ կլինի:
4) Ս.Վարդանյան-Ես ղեկավարում եմ միայն բակալավրիատում Մարտիրոսյան Թամարայի, Սամվելյան Անիի և Հովհաննիսյան Լիանայի դիպլոմային աշխատանքները, որոնք ընթացքը նորմալ է, գրեթե 80-85%-ից ավելին պատրաստ է: Պաշտպանությանը երեքն էլ պատրաստ կլինեն:
5) Մ.Աղաջանյան- Ես ղեկավարում եմ 3 ուսանողի բակալավրիատում՝ Մուրադյան Արմիկի, Բալյան Մանանի, Ալեքսանյան Սեդայի և 1 ուսանող մագիստրատուրայում՝ Մկրտչյան Սուսաննայի ավարտական աշխատանքները: Ամեն ինչ կարգին է:
6) Ա.Հարությունյան-Իմ ղեկավարությամբ իրենց ավարտական աշխատանքներն են կատարում բակալավրիատի երեք ուսանող՝ Սամվելյան Էլեն, Ղուլիջանյան Անուշ, Փարվանյան Զենֆիրա: Աշխատանքների ընթացքը նորմալ է: Դժգոհություն չունեմ:
7) Ա.Սահրադյան-Ես ղեկավարում եմ բակալավրիատում 4 ուսանողի ավարտական աշխատանքը՝ Ավետիսյան Էդգար, Դավթյան Արման, Մկրտչյան Ռիմա, Ադլոյան Մարիամ: Աշխատանքները նորմալ են: Մագիստրատուրայում ղեկավարում եմ Մարտիրոսյան Ֆլորայի թեզը: Աշխատանքի ընթացքը նորմալ է:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ատեստավորել բակալավր 4-րդ կուրսի և մագիստրատուրա 2-րդ կուրսի ավարտական աշխատանքները:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 17

2020թ-ի ապրիլի 20-ի ,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով: զեկ.դասախոսներ
2. Առաջարկներ ամփոփիչ ստուգումները առցանց կազմակերպելու վերաբերյալ:
3. Առաջարկներ ավարտական ատեստավորման աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը առցանց կազմակերպելու վերաբերյալ
4. Ընթացիկ հարցեր:

Նարկա էին ամբիոնի 8 անդամ (ներկայաթերթը կցվում է):

Միաձայն հաստատվեց օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ- Ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը առցանց հեռավար մեթոդով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1. Տ. Այվազյան- Ես բակալավրիատում դասավանդում եմ 3-րդ և 4-րդ կուրսերում: Ընդհանուր առմամբ դասերը ընդանում են նորմալ: 3-րդ կուրսում բացականեր չկան, իսկ 4-րդ կուրսում՝ 30-40% ուսանողները ունեն բացակայություններ: 1-ին կուրսի մագիստրոսները պրակտիկայի են: Իմ ղեկավարությամբ գտնվող մագիստրոսը՝ Առուստամյան Զինաիդան, կցված է հիդրավլիկայի և ջերմատեխնիկայի դասընթացին: Հեռակա 5-րդ կուրսի ուսանողները ուղարկել են իրենց միջանկյալ գրավորները: Ամեն ինչ կարգին է:

2.Բ.Խոդերյան-Ես դասավանդում եմ մագիստրատուրա 2-րդ, բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերում: 3-րդ կուրսի ուսանողները ապրիլի 27-ից ունեն երեք շաբաթյա ուսումնական պրակտիկա, իսկ 1-ին կուրսի մագիստրանտները արդեն պրակտիկայի են: Իմ դասընթացին կցված են առաջին մագիստրանտներ Գաբրիելյան Մերին և Արզումանյան

Կարինեն: Նրանք արդեն մեկական դաս են վարել: Դասերը ձայնագրված և տեղադրված են համապատասխան դասընթացում:

3. Ա.Հարությունյան-Ես դասավանդում եմ բակալավր 1-ին և 4-րդ կուրսերում: Ամեն ինչ նորմալ է: Առաջին կուրսում բացականեր չեն լինում, 4-րդ կուրսում 50-60% ուսանողները ներկա են լինում դասերին: 1-ին մագիստրոս Ավետիսյան Նվարդը պրակտիկայի շրջանակներում կցված է ,,Ժող. գեղ. արհեստներ,, առարկայի դասընթացին, վարել է դաս, ձայնագրությունը տեղադրված է համապատասխան հարթակում: Հեռակա 5-րդ կուրսի ուսանողները միջանկյալ գրավոր աշխատանքները գրել են, որը արդեն գնահատված է և տեղադրված է classroom-ում:

4. Ն.Օրդյան-Իմ դասերը նույնպես ընթանում են նորմալ: Պրակտիկանտ մագիստրոսը վարել է դասը, ձայանգրված է այն և տեղադրված է հարթակում: 2-րդ մագիստրոսը ուղարկել է իր մագիստրոսական թեզը: Այն նորմալ է:

5. Ա.Սահրադյան-Ես դասավանդում եմ 1-ին և 3-րդ բակալավրիատում և 1-ին և 2-րդ մագիստրոսների մոտ: Ինձ մոտ էլ ամեն ինչ կարգին է:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ուսումնական գործնթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Առաջարկներ ամփոփիչ ստուգումները առցանց կազմակերպելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան-Այս կիսամյակում հանրապետությունում ստեղծված իրավիճակից ելնելով ամփոփիչ ստուգումները ամենայն հավանականությամբ կլինեն առցանց: Պետք է սպասենք համապատասխան հրամանի, ըստ որի արդեն հաջորդ շաբաթ կկազմեմ և կուղարկեմ քննությունների գրաֆիկները և կիրականացվի միջանկյալները Mit-ծրագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ-Սպասել համապատասխան որոշման:

3. ԼՍԵՑԻՆ- Առաջարկներ ավարտական ատեստավորման աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը առցանց կազմակերպելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրրադյան-Ցանկալի է, որ գոնե ավարտական դիպլոմային պաշտպանությունները լինեն համալսարանում՝ հանձնաժողովի ներկայությամբ, քանի որ շրջաններից ունենք ուսանողներ, որոնք ունեն ինտերնետային կապի խնդիր: Նրանց համար շատ դժվար կլինի պաշտպանության ընթացքը: Այդ իսկ պատճառով առաջարկում եմ հնարավորինս պահպանելով անվտանգության նորմերը, քննությունը անցկացնենք համալսարանում՝ գոնե մագիստրոսներինը, քանի որ քիչ են:

ՈՐՈՇԵՑԻՆ-Առաջարկը ներկայացնել ռեկտորատ և սպասել համապատասխան հրահանգների:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 17

2020թ-ի ապրիլի 28-ի ,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի նիստի

Օրակարգում

1. Երրորդ կուրսի պրակտիկայի ընթացքը: զեկ. Ա.Սահրադյան
2. Ավարտական կուրսերի նախապաշտպանությունների և թեզերի մասին: զեկ.Դեմիրխանյան
3. Ամփոփիչ քննությունների ընթացակարգը: զեկ. Ն. Օրդյան
4. Հեռակա 5-րդ կուրսի շրջանավարտների ավարտական աշխատանքների մասին: զեկ. դասախոսներ
5. Ընթացիկ հարցեր:

Նարկա էին ամբիոնի 7 անդամ:
Նիստին ներկա էր նաև ֆակուլտետի դեկան Գ.Դեմիրխանյանը
Ներկայաթերթը կցվում է:

1. ԼՍԵՑԻՆ- Երրորդ կուրսի պրակտիկայի ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ա.Սահրադյան-Ես խոսել եմ տիկին Հ. Այվազյանի հետ, ով ղեկավարում է մեր ուսանողների պրակտիկան: Նա ունեցել է առցանց հանդիպում ուսանողների հետ, պայնամավորվել են, որ կհանդիպեն շաբաթական 4 անգամ: Պրակտիկայի շրջանակներում կուսումնասիրեն ,,Աղուես,, ծրագիրը, որի ուղեցույցը արդեն դրված է պրակտիկայի հարթակում: Պրակտիկայի ընթացքը նորմալ է:

ՈՐՈՇԵՑԻՆ-Պրակտիկայի ընթասքը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ- Ավարտական կուրսերի նախապաշտպանությունների և թեզերի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Գ.Դեմիրխանյանը-Այս տարի ավարտական թեզերի նախապաշտպանությունները ըստ երևույթի կլինեն մինչև մայիսի 15-ը: Օրերս կպատրաստվի և ամբիոններ կուղարկվի տեսանյութ, որտեղ կասվի պետական քննությունների անցկացման մասին: Ընթացիք քննությունների վերաբերյալ որոշվեց, որ ,,մասնակցություն,, բաղադրիչը նշանակվի 100, ստուգվող էլեկտրոնային առաջադրանքն էլ չեղարկել: Իսկ վարձավճարների համար ասեմ, որ մեր ֆակուլտետում շարժ կա:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ավարտական կուրսերի նախապաշտպանությունների և թեզերի մասին

տեղեկությունները ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ- Ամփոփիչ քննությունների ընթացակարգը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Ն.Օրդյան-Այս կիսամյակում ամփոփիչ քննություն միայն ես ունեմ, տոմսերը պատրաստել եմ Forms ֆորմատով, կտեղադրեմ կարթակում: Ամեն ինչ կարգին է:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամփոփիչ քննությունների ընթացակարգը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի շրջանավարտների ավարտական աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Բ.Խոդերյան-Ես ունեմ երկու դիպլոմնիկ՝ Թարխանյան Գայանեն և Հովհաննիսյան Սոնիկը: Արդեն ուղարկել են իրենց աշխատանքները: Ամեն ինչ նորմալ է:

2) Ն.Օրդյան- Ինձ մոտ ավարտական աշխատանք են կատարում Կարինե Մկրտչյանը և Փնջիկ Անդրեասյանը: Աշխատանքները մոտավորապես 50%-ով կատարված է: Առկայից հետո կշարունակենք աշխատանքները: 5-րդ կուրսի համար կստեղծենք classroom-հարթակ: Դիպլոմային աշխատանքները կտեղադրվի այդ հարթակում:

3) Ա.Տիգրան-Ինձ մոտ ավարտական աշխատանքներ կատարում են 3 ուսանող՝ 1 մագիստրոս- Աշխեն Հովսեփյանը և երկու ուսանող հեռակայից՝ Արսեն Գասպարյանը և Վարսենիկ Ղազարյանը: Աշխենի աշխատանքը կարդացել եմ, պետք է որոշակի փոփոխություններ արվի, իսկ հեռակայի ուսանողներին հանձնարարությունները տրված են, աշխատու են:

4) Ա.Հարությունյան-Իմ ղեկավարությամբ դիպլոմային աշխատանքներ են կատարում առկայում 3 ուսանող, որոնց աշխատանքները ≈95%-ով պատրաստ է, սահիկահանդեսն էլ /презентация/ պատրաստ կլինի: Հեռակայում ունեմ մեկ ուսանող՝ Նազարյան Ռուզաննան, ում աշխատանքում մնում է կատարել վերջին շտկումները:

5) Ս.Վարդանյան-Ես ունեմ երկու ուսանող հեռակայում, որոնք ստացել են իրենց հանձնարարությունները և անհրաժեշտ գրականությունը: Աշխատանքները կատարված են 60-70%-ով: Մնացել է միայն մեթոդական մասը կատարեն: Հուսով եմ կհասցնեն:

6) Ա.Սահրադյան-Ինձ մոտ ավարտական աշխատանք է կատարում Հովսեփյան Սերգեյը, որի աշխատանքից այդքան էլ գոհ չեմ: Հետը խոսել եմ, խոստացել է նորմալ աշխատի: Ընդհանուր առմամբ բավարարված չեմ դիպլոմնիկների կատարած աշխատանքներից:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի շրջանավարտների ավարտական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

5. Ընթացիկ հարցեր

5. 1. ԼՍԵՑԻՆ- Քննական գրաֆիկների վերաբերող հարցեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Ն.Օրդյան-Մոտ օրերը կկազմեմ 2-րդ միջանկյալ գրավորների գրաֆիկը և կտեղադրեմ հարթակում: Մայիսի մինչև 15-ը կլինի դիպլոմային աշխատանքների նախապաշտպանությունները, իսկ պետականները կլինեն հունիսի սկզբին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Նախապատրաստել միջանկյալ գրավորների համար նախատեսված տարբերակները:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Արձանագրություն №18

Առկա բակալավր 4-րդ կուրսի 12.05.2020թ., 13.05.2020թ. նախապաշտպանությունից

ԼԱՍԵՑԻՆ-Առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական թեմաների նախապաշտպանությունները

ԱՐՏԱՀԱՅՏՎՈՑԻՆ- 1. Սեդա Ալեքսանյան - ղեկավար՝ Մ.Աղաջանյան

Թեման-«Խոհանոցի դերը և նշանակությունը» թեմայի դասավանդումը ժամանակակից համագործակցային մեթոդների կիրառմամբ:

Աշխատանքում ուսումնասիրել է «Խոհարարություն» բաժնի դասավանդման առանձնահատկությունները «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակում: Վեր է հանել միջին դպրոցում «Խոհարարություն» բաժնից սովորողների ունեցած գիտելիքները և կարողությունները:

Եզրակացություններ է կատարել միջին դպրոցում «Խոհանոցի դերը և նշանակությունը» թեմայի դասավանդման առանձնահատկությունների վերաբերյալ:

2. Մարիամ Խաչատրյան-ղեկավար՝ Բ.Խոդերյան

Թեման-«Փայտանյութի փորագրություն» թեմայի ուսուցումը որպես տեխնիկական ստեղծագործության և գեղագիտական ճաշակի ձևավորման գործոն:

Աշխատանքում ներկայացված է փայտի փորագրության առանձնահատկությունները, գործիքները և փորագրության մեջ կիրառվող փայտատեսակները: Ցուցադրված է փայտի փորագրման եղանակներ և փորագրության գործնական աշխատանքներ: Մշակել է «Փայտանյութի փորագրություն» թեմայի ինտերակտիվ դասեր, կիրառելով ՏՀՏ–ներ և ակտիվացնող կրթական մեթոդներ:

3. Վարսենիկ Ապրեսյան –ղեկավար՝ Տ.Այվազյան

Թեման- Ժամանակակից ավտոմատիկայի տարրերի ուսուցումը միջին մասնագիտական հաստատությունում:

Աշխատանքում ներկայացվեց ռելեների և տարբեր տեսակի տվիչների աշխատանքի սկզբունքները և կիրառման ոլորտները: Հասկանալի կերպով նկարագրված է ժամանակակից ավտոմատիկայի համակարգերի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները: Կարողացել է տեսականորեն օգտագործել տարբեր տեսակի ռելեներ և տվիչներ ժամանակակից ավտոմատիկայի համակարգերում:

4. Էլեն Սամվելյան-ղեկավար՝ Ա.Հարությունյան

Թեման- Դպրոցի և ընտանիքի գործոնը մասնագիտական կողմնորոշման հարցում:

Ներկայացվեց կրթական համակարգի բարեփոխման գործընթացում մասնագիտական կողմնորոշման հմտությունների ձևավորման ուղիները: Ուսումնասիրել է անհատի առանձնահատկությունները և մասնագիտության ընտրության հարցում ազդող գործոնները, մասնավորապես, դպրոցի և ընտանիքի: Մշակել է մեթոդներ կրթական

համակարգի ընձեռած հնարավորությունների, մասնագիտությունների, անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում: Ներկայացրել է սովորողների կողմից սեփական ունակությունների և հակումների իրատեսական գնահատման կարողությունների ձևավորման, տարբեր մասնագիտություններին ներկայացվող ընդհանրական պահանջների իմացություն, որակյալ կրթություն ստանալու կարևորության անհրաժեշտությունը:

5. Մանանա Բալյան-ղեկավար՝ Մ.Աղաջանյան

Թեման-«Հասկացություն մեքենաների և մեխանիզմների մասին» թեմայի դասավանդումը ժամանակակից համագործակցային մեթոդների կիրառմամբ:

Ավարտական աշխատանքում պատկերված է «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակությունը և դերը հիմնական դպրոցում, «Մեքենագիտության տարրեր» բաժնի դասավանդման առանձնահատկությունները «Տեխնոլոգիա» առարկայի դասընթացում:
Վեր է հանել միջին դպրոցում «Հասկացություն մեքենաների և մեխանիզմների մասին» թեմայից սովորողների գիտելիքները և կարողությունները: Ավարտական աշխատանքի մշակման արդյունքները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցներում և կնպաստեն սովորողների գիտելիքների ու կարողությունների զարգացմանը:

6. Ղուլիջանյան Անուշ-ղեկավա- Ա. Հարությունյան

Թեման- Ակնառու դիդակտիկ նյութերի կիրառումը 6-րդ դասարանի Տեխնոլոգիա առարկայի «Գրաֆիկա» բաժնի ուսուցման գործընթացում:

Ավարտական աշխատանքում ուսումնասիրել է գծագրերի ստեղծման համար կիրառվող պրոյեկտման մեթոդները: Երկրաչափական մարմինների պրոյեկտման առանձնահատկությունները, պրոյեկցիաների հարթություններում դրանց դասավորելու ձևերը: Ուսումնասիրել է տեխնիկական նկարների, էսքիզների, ինչպես նաև երկրաչափական մարմինների մակերևույթների փռվածքների կառուցման կարգը: Ներկայացրել է 6-րդ դասարանի Տեխնոլոգիա առարկայի «Գրաֆիկա» բաժնի ուսուցման գործընթացում ակնառու դիդակտիկ նյութերի կիրառման արդյունավետությունը:

7. Երեմյան Հասմիկ-ղեկավար Բ. Խոդերյան

Թեման-«Դիզայնի տարրեր» թեմայի ուսուցանումը 7-րդ դասարանում, որպես աշակերտների գեղագիտական դաստիարակության մեթոդ

Թեմայում ուսումնասիրել է ««Դիզայն» բաժնի բովանդակությունը: Ներկայացրել է դիզայնի տարրեր, գույնը, գույների տեսությունը, տեսակները և ճյուղերը: Բերել է

գործնական աշխատանքների օրինակներ: Պատրաստել է «Դիզայնի տարրեր» թեմային վերաբերվող դասեր կիրառելով ակտիվացնող ուսուցման մեթոդներ և ՏՀՏ–ներ:

8. Հակոբյան Էմմա-ղեկավար Բ. Խոդերյան

Թեման-Հայկական տարազ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները որպես աշակերտի հայեցի դաստիարակության միջոց:

Է.Հակոբյանը ուսումնասիրել և ներկայացրել է հայկական տարազի պատմությունը և առանձնահատկությունները ըստ բնակավայրերի, ինչպես նաև հայկական տարազի տեսակները և առանձնահատկությունները: Մշակել է «Հայկական տարազ» թեմայի դասը, կիրառելով ժամանակակից ակտիվացնող ուսուցման մեթոդներ:

9. Անտոնյան Սյուզաննա-ղեկավար Բ. Խոդերյան

Թեման-«Փայտանյութի արատները» թեմայի ուսումնասիրումը աշակերտների տեխնոլոգիական հմտությունների ձևավորման գործընթացում:

Աշխատանքում ուսանողը ներկայացրեց փայտանյութի արատների տեսակները և դրանց աղդեցությունը փայտանյութերի ռացիոնալ օգտագործման վրա: Փայտանյութերի տարբեր ծագում ունեցող արատները և բացատրեց դրանց դերը փայտանյութերի օգտագործման գործընթացում: Պատրաստել է տվյալ թեմային վերաբերվող դաս, կիրառելով ՏՀՏ–ներ և ակտիվացնող ուսուցման մեթոդներ

10. Աղլոյան Մարիամ-ղեկավար Ա.Սահրադյան

Թեման-«Էլեկտրոնային սարքավորումների եռակցումը» թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ավարտական աշխատանքում ուսումնասիրել է եռակցման գործընթացի տեսակները, սարքավորումները՝ մասնավորապես էլեկտրոնային սարքերի եռակցման գործընթացը, էլեկտրոնային սարքավորումների սալատախտակների կոնտակտային տիրույթների եռակցման սկզբունքները: Ուսումնասիրել է իր թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

11. Փարվանյան Զեմֆիրա-ղեկավար Ա. Հարությունյան

Թեման-«Փայտանյութը որպես բնական կոնստրուկցիոն նյութ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները:

Աշխատանքում ներկայացվեց «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման գործընթացի առանձնահատկությունները, ուսուցման ժամանակակից ակտիվացնող մեթոդների կի-րառման արդյունավետությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ

ուսուցման գործընթացի կազմակերպման հիմնական ձևերն ու մեթոդները: Ուսումնասիրել է փայտանյութի ֆիզիկական, մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները: Մշակել է գործնական աշխատանքների արդյունավետ անցկացման մեթոդներ: Ներկայացրել է 5-րդ դասարանի Տեխնոլոգիա առարկայի «Փայտանյութը որպես բնական կոնստրուկցիոն նյութ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները:

12. Ադամյան Արմինե- ղեկավար Ն. Օրդյան

Թեման-«Տեխնոլոգիա» առարկայի «Օգտակար ինքնաշեն պարագաների պատրաստում» թեմայի դասավանդումը 5-րդ դասարանում որպես աշակերտների աշխատանքային հմտությունների զարգացման միջոց:

Աշխատանքում ուսումնասիրել է կենցաղում օգտագործվող տարբեր իրերի պատրաստման եղանակները, մշակել է տեխնոլոգիական քարտեր ինքնաշեն պարագաների պատրաստման համար: Մշակել է գործնական դաս 6-րդ դասարանում «Տեխնոլոգիա» առարկայի «Օգտակար ինքնաշեն պարագաների պատրաստում» թեմայի դասավանդման համար: Ներկայացրեց տվյալ թեմայի գործնական աշխատանքների համար տեխնոլոգիական քարտեր:

13. Հովհաննիսյան Լիաննա -ղեկավար Ս.Վարդանյան

Թեմա- «Գրաֆիկա» բաժնի «Պտտման մարմինների պատկերումը գծագրերում» թեմայի դասավանդման առանձնահատկությունների ուսումնասիրումը հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանում:

Ուսումնասիրել է տվյալ թեմայի կառուցվածքն ու առանձնահատկությունները, կոնի, գլանի, գնդի՝ որպես պտտման մարմինների պատկերումը գծագրերում: Ներկայացրեց պտտման մարմինների՝ կոնի, գլանի գնդի և թորի պատկերումը աքսոնոմետրիկ պրոյեկտման եղանակով:

14. Ասատրյան Վիկտորիա-ղեկավար Ն.Օրդյան

Թեման-Աշակերտների ինժեներական մտածելակերպի զարգացումը 7-րդ դասարանում նախագծերի կատարման միջոցով:

Աշխատանքում ուսումնասիրել է 7-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրով նախատեսված «Նախագիծ» բաժնի թեմաները: Ինչպես նաև ուսումնասիրել է ռոբոտատեխնիկական հավաքածուները և դրա համար նախատեսված համակարգչային ծրագիրը: Մշակել է դասավանդման մեթոդիկա 7-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրով նախատեսված «Նախագիծ» բաժնի «Մանկական էլեկտրական խաղալիքներ» թեմայի դասավանդման համար:

15. Լիանա Մանուկյան-ղեկավար Տ.Այվազյան

Թեման-«Փոփոխական հոսանքի շղթաների ուսումնասիրումը» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական հաստատություններում:

Լ.Մանուկյանը խոսեց R,L,C փոփոխական հոսանքի շղթաների առանձնահատկությունների մասին և դրանց կիրառումը էլեկտրատեխնիկայում և ռադիոտեխնիկայում: Ներկայացրեց, թե ինչպես են կիրառում R,L,C շղթաները տնտեսության տարբեր ոլորտներում: Կարողացավ կատարել և ներկայացնել «Փոփոխական հոսանքի շղթաների ուսումնասիրումը» թեմայի դասավանդումը ժամանակակից կրթական մեթոդներով:

16. Մուրադյան Արմիկ-ղեկավար Մ.Աղաջանյան

Թեմա-«Ավտոմոբիլային շարժիչներ» թեմայի դասավանդման առանձնահատկու-թյունների ուսումնասիրությունն ու վերլուծությունը միջին մասնագիտական հաստատությունում:

Աշխատանքում ուսումնասիրել է «Ավտոմոբիլ» առարկայի բովանդակությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում: Ուսումնասիրել է նաև «Ավտոմոբիլային շարժիչներ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները «Ավտոմոբիլ» դասընթացում: Վեր է հանել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում «Ավտոմոբիլ» առարկայից սովորողների գիտելիքները և կարողությունները:: Նշել է, որ աշխատանքի մշակման արդյունքները կարող են կիրառվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, որոնք կնպաստեն սովորողների գիտելիքների ու կարողությունների զարգացմանը:

17. Մարտիրոսյան Թամարա-ղեկավար Ս.Վարդանյան

Թեմա- Ուսումնասիրել 7-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի «Պարուրակային միացություններ» թեմայի կառուցվածքը և առանձնահատկությունները:

Աշխատանքում ուսումնասիրել է հեղույս-մանեկ-տափօղակ, գամասեղ-մանեկ-տափօղակ և պտուտակային միացությունների տեսակները, դրանց պատկերման եղանակները: Ծանոթացել է 7-րդ դասարանի «Պարուրակային միացություններ» թեմայի բովանդակությանը և առանձնահատկություններին: Ներկյացրել է հեղյուս-մանեկ պարուրակային միացության տեսանկերը՝ ըստ պրոֆիլների և ուղղության, ինչպես նաև կիրառման բնագավառները և գրաֆիկական պատկերման ձևերը:

18. Սամվելյան Անի-ղեկավար Ս.Վարդանյան

Թեմա-«Կիրառական մեխանիկա» դասընթացի «Գլորման առանցքակալներ և առանցքակալային հանգույցներ» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական հաստատություններում՝ ժամանակակից կրթական մեթոդների կիրառմամբ:

Ավարտական աշխատանքում ուսումնասիրել է «Կիրառական մեխանիկա» դասընթացի «Գլորման առանցքակալներ» թեմայի կառուցվածքն ու առանձնահատկությունները, գլորման և սահքի առանցքակալների կառուցվածքը, պատրաստման առանցաքակալային պողպատները, ինչպես նաև ներկայացրել է գլորման առանցքակայլների գլորման մարմինների տեսակներն ու ընտրությունը՝ բեռնվածություններից կախված: Ներկայացրել է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Կիրառական մեխանիկա» դասընթացի «Գլորման առանցքակալներ և առանցքակալային հանգույցներ» թեմայի դասավանդման գործընթացը՝ ժամանակակից կրթական մեթոդների կիրառմամբ:

19. Ներսիսյան Թագուհի-ղեկավար Տ.Այվազյան

Թեմա-«Ջերմային ճառագայթման ուսումնասիրումը» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական հաստատությունում:

Աշխատանքում ուսումնասիրել է ջերմային ճառագայթման օրենքները և դրանց կիրառումը արդյունաբերության տարբեր ոլորտներում, միջին մասնագիտական հաստատություններում տվյալ թեմայի դասավանդման առանձնահատկությունները: Կարողացել է դասավանդել նշված թեման՝ կիրառելով ժամանակակից կրթական մեթոդներ:

20. Ավետիսյան Էդգար-ղեկավար Ա.Սահրադյան

Թեմա-Աշակերտների մոտ տեխնոլոգիական գիտելիքների զարգացումը «Պլաստմասսաների ստացումը և մշակումը» թեմայի ուսուցման միջոցով:

Է.Ավետիսյանը ուսումնասրել է պլաստմասսաների մշակման տեխնոլոգիական եղանակները: Կազմել է էլեկտրանային տեսադաս՝ պլաստմասսայից դետալների պատրաստման գործընթացների վերաբերյալ: Ծանոթացել է պլաստմասսաներից դետալների ստացման ժամանակակից տեխնոլոգիական եղանակներին և մշակել է դասավանդման մեթոդիկա հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանում թեման դասավանդելու համար:

21. Դավթյան Արման- ղեկավար Ա.Սահրադյան

Թեմա- Աշակերտների մոտ ժամանակակից տեխնիկա-տեխնոլոգիական մտածելակերպի ձևավորման առանձահատկությունները լիսեռների հղկման տեխնոլոգիայի մշակման օրինակով:

Աշխատանքում ներկայացվեց լիսեռատիպ դետալները և դրանց մշակման առանձնահատկությունները հղկման գործընթացում, լիսեռատիպ դետալների պատրաստման նյութերի՝ պողպատների ընտրությունը՝ կախված բեռնվածություններից:

ՈՒսումնասիրել է լիսեռների առանցքակալային վզիկների վերջնամշակման օպերացիան: Ներկայացրեց լիսեռներով աշխատող սարքերի և սարքավորումների աշխատանքային ճշգրտության ապահովումը: ՈՒսումնասիրելով լիսեռների առանցքակալային վզիկների վերջնամշակման օպերացիայի վերջնարդյունքները՝ ներկայացրեց լիսեռների տեխնոլոգիական մշակման արդյունքում աշակերտների մտածելակերպի ձևավորումը:

22. Հովհաննիսյան Ելենա-ղեկավար Ն. Օրդյան

Թեմա-«Տեխնոլոգիա» առարկայի «Հասկացողություն մոդելավորման մասին» թեմայի ուսուցումը որպես աշակերտների գեղագիտական ճաշակի զարգացման միջոց:

Աշխատանքը կատարելիս ուսումնասիրել է մոդելավորման սկզբունքները՝ գունատեսություն և մոդելավորման գեղագիտական հիմունքները: Ներկայացրեց հանձնարարված թեմայի դասավանդման առանձնահատկությունները, ինչպես նաև հագուստի մոդելավորման թեմայի ուսումնամեթոդական փաթեթ «Հասկացողություն մոդելավորման մասին» թեման 5-րդ դասարանում դասավանդելու համար:

Տադիրյան Ժաննան, Չոբանյան Գոհարը, Վարդանյան Սոնան, Սողոմոնյան Մարինեն և Մելքոնյան Լիաննան իրենց աշխատանքները ներկայացրեցին տնտեսագիտության ոլորտից: Բոլորի աշխատանքներն էլ բավականին հետաքրքիր և բովանդակալից էր:

Նախապաշտպանության տեսաձայնագրությունը տեղադրված է համապատասխան դասընթացում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Թեև բոլոր աշխատանքներում էլ կային որոշակի թերություններ, որոնք մինչև պաշտպանությունը ամպայման կշտկվեն՝ երաշխավորել պաշտպանության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №19

Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի 14.05.2020թ. նախապաշտպանությունից

ԼԱՍԵՑԻՆ-Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրանտների մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1. Հովսեփյան Աշխեն-ղեկավար՝ Տ Այվազյան

Թեմա-<<Արևային էլեկտրակայան>> թեմայի դասավանդման հետազոտումը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:

Ներկայացվեց աշխատանքը, որը շարադրված էր գրագետ և հագեցած էր նկարներով և բանաձևերով: Օգտվել էր դասավանդման տարբեր մեթոդներից՝ աշակերտների հետ աշխատելիս: Կազմել էր նաև թեմատիկ պլան:

2. Իննա Հակոբյան-ղեկավար Ն.Օրդյան

Թեման- ՏՀՏ-ի կիրառմամբ «Նյութերի գեղարվեստական մշակում» թեմայի դասավանդման արդյունավետության հետազոտումը 5-րդ դասարանում

Թեման շարադրելիս մշակել է թեմայի դասավանդման արդյունավետ մեթոդիկան՝ օգտագործելով ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ: Մշակել է արդյունավետ մեթոդներ «Նյութերի գեղարվեստական մշակում» թեմայի դասավանդման համար: Ուսումնասիրել է այն մեթոդական գրականությունը, որի մեջ և համացանցում առկա են այն նյութերը, որոնք վերաբերվում են թեմային, դասակարգել և վերլուծել է առկա մոտեցումները, վեր հանելով լրացուցիչ մշակման հարցերը, ծանոթացել է համակարգչային այն ծրագրերին, որոնց կիրառումը արդյունավետ կլինի նյութերի գեղարվեստական մշակման և ձևավորման գործում, մշակել է մեթոդական նյութեր, որոնց կիրառության շնորհիվ կբարձրանա « Փափուկ խաղալիքներ » թեմայի ուսուցման արդյունավետությունը:

3. Աբաղյան Նառա-ղեկավար՝ Բ.Խոդերյան

Թեմա-«Ժամանակակից ակտիվ կրթական մեթոդների կիրառման արդյունավետության հետազոտում»:

Թեմայի համար մշակել է դասավանդման մեթոդիկա՝ կիրառելով ժամանակակից ակտիվացնող կրթական մեթոդներ և ՏՀՏ-ներ:

4.Մարտիրոսյան Ֆլորա-ղեկավար Ա.Սահրադյան

Թեմա -«Կտրման ուժերի և կծկման գործակցի հետազոտումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում»:

Աշխատանքում հետազոտել է կտրման ուժերի և կծկման գործակցի աղդեցությունը գործիքի մաշակայունության և աշխատանքի արտադրողականության վրա, ինչպես նաև դասավանդման մեթոդիկայի մշակում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Կազմել է թեմատիկ պլան, օգտվել է դասավանդման տարբեր մեթոդներից:

5. Մկրտչյան Սուսաննա- Մ.Աղաջանյան

Թեմա-Նախագծային մեթոդի կիրառման առանձնահատկությունների հետազոտումը <<Տեխնոլոգիա>> առարկայի դասավանդման գործընթացում:

Աշխատանքը շարադրելիս ձեռք է բերել տեխնոլոգիական գիտելիքներ և հմտություններ: Ծանոթացել է արտադրության մեջ կիրառվող կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգին: Կազմել է էսքիզներ, գծագրեր, տեխնոլոգիական քարտեր: Աշխատանքում ստացված մշակումները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև այլ կրթական հաստատություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Թույլատրել մասնակցել պաշտպանության:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 20

2020թ-ի մայիսի 21-ի ,,Տեխնոլոգիական կրթության,, ամբիոնի նիստի

Օրակարգում `

1. Առցանց հեռավար ուսումնական գործընթացների ընթացքը:
2. 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ավարտը և բանկային պրակտիկայի կազմակերպումը:
3. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ամփոփիչ քննությունների ընթացքը:
4. 2-րդ միջանկյալ և ամփոփիչ քննությունների տոմսերի հաստատման մասին:
5. Ընթացիկ հարցեր:

   ա/մագիստրոսական թեզի գրախոսականի և ղեկավարի կարծիքի, բակալավրի ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքի մասին:

Նարկա էին ամբիոնի 8 անդամ:
Ներկայաթերթը կցվում է:

1. ԼՍԵՑԻՆ- Առցանց հեռավար ուսումնական գործընթացների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1) Բ.Խոդերյան-Ունեմ մեկ դասընթաց մագիստրոս 1-ին կուրսում: Դասերը ընդանում են նորմալ: Բացթողումներ չունենք: Այս շաբաթ կվերջացնենք դասապրոցեսը:

2)Ա.Հարությունյան-Ես դասավանդում եմ 1-ին բակալավրիատում և 1-ին մագիստրոսների մոտ: Դասապրոցեսը նորմալ է: Մեզ մոտ էլ վերջին շաբաթն է:

3)Տ.Այվազյան-Ինձ մոտ էլ միայն առաջին մագիստրոսներն են: Մեզ մոտ էլ դասերի իրականացման վերջին շաբաթն է: Ամեն ինչ նորմալ է:

4)Ն.Օրդյան- Ինձ մոտ վերջացել է դասապրոցեսը:

5)Մ.Աղաջանյան-Ես դասավանդում էի 4-րդ կուրսում: Ինձ մոտ նույնպես դասերը ավարտվել են:

6)Ա.Սահրադյան-Ես դասավանդում եմ 1-ին բակալավրիատում և 1-ին մագիստրոսների մոտ: Դասապրոցեսը նորմալ է: Հաջորդ շաբաթ կլինի վերջին դասը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Առցանց հեռավար ուսումնական գործընթացը համարել բավարար:

2. ԼՍԵՑԻՆ-3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ավարտը և բանկային պրակտիկայի կազմակերպումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ.Խոդերյան-Երրորդ կուրսի ուսումնական պրակտիկան, որը շատ լավ կազմակերպված էր, ավարտվել է, որի ընթացքից և ուսանողները, և ղեկավարը շատ գոհ են եղել: Իսկ պրակտիկայի հաջորդ փուլը, որը կիրականացվի բանկում նույնպես կկազմակերպվի:

ՈՐՈՇԵՑԻՆ-3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ավարտը և բանկային պրակտիկայի կազմակերպումը համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ- Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ամփոփիչ քննությունների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ն.Օրդյան –Հեռակա 5-րդ կուրսի ուսանողները ավարտել են իրենց մրջանկյալ քննությունները, որը նույնպես կազմակերպվեց առցանց: Պատրաստվում են ավարտական քննությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ամփոփիչ քննությունների ընթացքը համարել բավարար:

4. ԼՍԵՑԻՆ-2-րդ միջանկյալ և ամփոփիչ քննությունների տոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Քանի որ առաջին միջանկյալ քննությունների քննական տոմսերը հաստատել ենք կիսամյակի սկզբում, առաջարկում եմ 2-րդ միջանկյալ ստուգման հարցատոմսերը հաստատել այս ամբիոնի նիստով՝ 21.05.2020թ:

ՈՐՈՇԵՑԻՆ-2-րդ միջանկյալ և ամփոփիչ քննությունների տոմսերը հաստատել 21.05.2020թ-ով:

5. ԼՍԵՑԻՆ- մագիստրոսական թեզի գրախոսականի և ղեկավարի կարծիքի, բակալավրի ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքի մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Մենք գիտենք, որ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների համար պետք է կազմվեն գրախոսականներ և ղեկավարի կարծիք, ուստի խնդրում եմ բոլորդ մոտ օրերը գրել այդ գրախոսականները և կարծիքները, որոնք մինչև պաշտպանությունը պետք է տեղադրվի համապատասխան դասընթացի պանակում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ի կատար ածել:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 21

Հեռակա բակալավր 5-րդ կուրսի 27.05.2020թ. նախապաշտպանությունից

ԼԱՍԵՑԻՆ- Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ավարտական թեմաների նախապաշտպանությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-1)Փ.Անդրեասյան-ղեկավար Ն.Օրդյան

Թեման - Հայկական ավանդական ծիսական տիկնիկների պատրաստման տեխնոլոգիական եղանակները և դրա դասավանդումը արտադասարանական պարապմունքների ընթացքում:

2)-Գասպարյան Արսեն-ղեկավար Տ.Այվազյան

Թեման-«ժամանակակից շարժիչների սնման համակարգը» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ՏՀՏ-ների կիրառմամբ:
3)Թարխանյան Գայանե-ղեկավար Բ.Խոդերյան
Թեման-«Հայկական խոհանոցի առանձնահատկությունները» թեմայի դասավանդումը միջին դպրոցում:
4)Հովհաննիսյան Սոնիկ-ղեկավար Բ.Խոդերյան
Թեման-«Կաթով և կաթնամթերքով կերակրատեսակների պատրաստումը» թեմայի դասավանդումը 6-րդ դասարանում:
5)Հովսեփյան Սերգեյ-ղեկավարԱ.Սահրադյան
Թեման-«Նյութագիտություն» դասընթացի «Պղնձի ստացման տեխնոլոգիայի ժամանակակից մեթոդները» թեմայի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:
6)Մանուկյան Գայանե-ղեկավար Մ.Աղաջանյան
Թեման-«Բանջարեղենի նշանակությունը մարդու սննդում» թեմայի դասավանդման մեթոդիկան 6-րդ դասարանում:
7)Մելքոնյան Մարիամ-ղոկավար Մ.Աղաջանյան
Թեման-«Ասեղնագործությունը որպես դեկորատիվ կիրառական արվեստի տեսակ» թեմայի դասավադման մեթոդիկան միջին դպրոցում:
8)Մինասյան Արմենուհի-ղեկավար Գ.Մնացականյան
Թեման- Պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում

9) Մկրտչյան Կարինե –ղեկավար Ն.Օրդյան

Թեման-Գրաֆիկական դիզայնի արտադասարանական պարապմունքները դպրոցում որպես աշակերտների գեղագիտական հմտությունների զարգացման միջոց

10) Մուրադյան Աշոտ-ղեկավար Ս.Վարդանյան

Թեման- Մեքենամասերի լծորդվող մակերևույթների գրաֆիկական կառուցման եղանակները որպես «Մեքենաշինական գծագրություն» դասընթացի խնդիրների պարզեցման միջոց:

11) Նազարյան Ռուզաննա-ղեկավար Ա.Հարությունյան

Թեման-«Դեկորատիվ ներկում և երանգավորում» թեմայի դասավանդման մեթոդիկան 5-րդ դասարանում:

12) Ոսկանյան Անի-ղեկավար Գ.Մնացականյան

Թեման- Շահութաբերության գնահատման առանձնահատկությունները փոքր և մրջին ձեռնարկատիրական ընկերություններում

13) Սողոմոնյան Գոհար- ղեկավար Ս.Վարդանյան

Թեման-«Երիթային և շլիցային միացումներ, դրանց թույլտվածքներն ու նստեցվածքները» թեմայի դասավանդումը նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունում՝ կրթական ակտիվ մեթոդների կիրառմամբ:

14) Մանվելյան Գրիգոր – ղեկավար Տ.Այվազյան

Թեման-«Սինխրոն մեքենաներ» թեմայի դասավանդման մեթոդիկան:

Ներկայացված բոլոր աշխատանքներն էլ հետաքրքիր և բովանդակալից էին, թեպետ կիային որոշակի թերություններ, որոնք պետք է ուղղվեն մինչև պաշտպանությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Թույլատրել մասնակցել պաշտպանությանը:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան

Արձանագրություն 22

2020թ-ի հունիսի 23-ի «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. Միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընթացքը:
   Զեկ. դասախոսներ
2. Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման մասին (գրախոսական, կարծիք):
   Զեկ. դասախոսներ
3. Ընթացիկ հարցեր:

Նարկա էին ամբիոնի 8 անդամ:
Ներկայաթերթը կցվում է:

1)ԼՍԵՑԻՆ- Միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընթացքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ս.Վարդանյան-Ներկայացնեմ ամբիոնում կայացած միջանկյալ և ամփոփիչ սուգումների ընթացքը գրաֆիկի տեսքով.

կուրս	Առարկան	Դասախոս	Ընթացիկ ստուգում	Ամփոփիչ ստուգում
1-ին բակ.	ԿՆՏ	Ա. Սահրադյան	100%	100%
	Տեխ. պրակ	Ա. Հարությունյան	100%	-
3-րդ բակ	Հիդրո, ջերմո.	Այվազյան	100%	-
	Կտրման տեսություն	Ա. Սահրադյան	100%	1չն
	Տեխ. ստեղծագործություն	Բ.Խոդերյան	1 չն	-
	Կիրառական մեխանիկա	Ս.Վարդանյան	100%	-
	Տեխ.առ.դաս.մեթ.	Մ.Աղաջանյան	100%	1չն
1-ին մագ.	Ժամ. կրթ. մեթ	Բ.Խոդերյան	100%	100%
	Փոշեմետալուրգիա	Ս.Վարդանյան	100%	100%
	Մակերևութային ճարտարագիտություն	Ա. Սահրադյան	100%	100%
	Այլընտրանքային էնորգիայի աղբ.	Տ. Այվազյան	100%	-

	Ավտոմատ նախագծման համակարգ	Ա.Հարությունյան	100%	-
1-ին հեռակա	Գծագրական երկրաչափություն	Ս.Վարդանյան	5 չն	4չն
	Տեխ. պրակ.	Ա.Հարությունյան	6 չն	-
2-րդ հեռակա	Կ. Ն. Տ.	Ա. Սահրադյան	4չն	26.06.2020
	Տեխ. պրակ.	Ա.Հարությունյան	3չն	
	Գծագրություն	Ս.Վարդանյան	4չն	
3-րդ հեռակա	Կիրառական մեխանիկա	Ս.Վարդանյան	24.06.2020	
	Տեխ.առ.դաս.մեթ.	Մ.Աղաջանյան	25.06.2020	
	Հագուստի պատրաստման տեխնոլոգիա	Ն.Օրդյան	26.06.2020	03.09.2020
	Մանկավարժական պրակտիկա		100%	
	Գծագրություն	Ս. Վարդանյան		31.08.2020
	Կուրսային աշխ.	Ս.Վարդանյան Ն.Օրդյան		10.09.2020
4-րդ հեռակա	Էլեկտրատեխնիկա	Տ.Այվազյան	-	31.08.2020
	Կտրման տեսություն	Ա.Սահրադյան	-	09.09.2020
	Տեխ.առ.դաս.մեթ.	Մ.Աղաջանյան	-	02.09.2020
	Հիդրավլիկա	Տ.Այվազյան	Հանձնման ժամկետը 24.06	-
	Ագրոտեխնիկա	Բ.Խոդերյան	Հանձնման ժամկետը 25.06	27.08.2020
	Մասնագիտական կողմնորոշում	Ա.Հարությունյան	25.06	-
	Էլ. տեխ. կարևոր խնդիրներ	Տ.Այվազյան	24.06	
	Կուրսային աշխատանք	Բ. Խոդերյան Ա. Հարությունյան Մ. Աղաջանյան		08.09.2020

Կարմիր գույնով նշված է այն քննության օրերը, որոնք դեռ չեն կայացել:

2)Բ.Խոդերյան- Ես ունեցել եմ քննություն 1-ին մագիստրոսների մոտ: Բոլորը ներկա էին, ստացել են դրական գնահատականներ: Որևէ խնդիր չենք ունեցել:

3)Տ.Այվազյան-Ունեմ երկու միջանկյալ ստուգում՝ հեռակա 4-րդ կուրսում: Տարբերակները տեղադրված են հարթակում, հույսով եմ ժամկետի մեջ պատասխանները բոլորը կուղարկեն:

4)Ս.Վարդանյան- Ինձ մոտ եղել է միջանկյալ ստուգում առկա 3-րդ կուրսում: Արդեն վերջացրել ենք, որևէ խնդիր չկա: Միջանկյալին միայն չի մասնակցել մեկ ուսանող՝ Մկրտչյան Անահիտը:

5)Ա.Հարությունյան-Ունեցել եմ միջանկյալ ստուգում 1-ին և բակալավրի և մագիստրոսների մոտ: Ամեն ինչ նորմալ է անցել:

Հեռակա 1-ին կուրսում եղել է միջանկյալ գրավոր. աշխատանք չեն ներկայացրել 6 ուսանող: 2-րդ հեռակայում գրավոր չեն ներկայացրել 3 ուսանող: 4-րդ հեռակաների մոտ գրավոր ունենք 25.06.-ին: Հուսամ ամեն ինչ նորմալ կլինի:

6)Ա.Սահրադյան-Ինձ մոտ էլ միջանկյալ գրավորներ եղել են 1-ին բակալավրի և մագիստրոսների մոտ, ամեն ինչ նորմալ էր, իսկ 3-րդ կուրսում միայն մեկ ուսանող՝ Մկրտչան Անահիտը չի մասնակցել քննությանը: Հեռակա2-րդ կուրսում ամփոփիչ քննություն ունեմ 26.06-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Միջանկյալ և ամփոփիչ քննությունների ընթացքը համարել բավարար:

2)ԼՍԵՑԻՆ- Հեռակա 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների կատարման մասին (գրախոսական, կարծիք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ մեզ քիչ ժամանակ է մնացել մինչև հեռակա 5-րդ կուրսի պաշտպանությունը: Ուստի խնդրում եմ արագացնել ավարտական աշխատանքների վերաբերյալ կարծիք, գրախոսականները ներկայացնել, ինչպես նաև վերջնական տեսքի բերել ավարտական աշխատանքները և սահիկահանդեսները (սլայդները):

ՈՐՈՇԵՑԻՆ-Մեկ-երկու օրվա ընթացքում աշխատանքների վերաբերյալ կարծիքները և գրախոսականները ներկաացնել:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 23

2020թ-ի հուլիսի 9-ի-ի «Տեխնոլոգիական կրթության» ամբիոնի նիստի

Օրակարգում՝

1. 2019-2020 ուս. տարվա ամբիոնի հաշվետվությունը:
2. Պետական քննությունների արդյունքների մասին:
3. 2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Նարկա էին ամբիոնի 8 անդամ:
Ներկայաթերթը կցվում է:

1)ԼՍԵՑԻՆ-2019-2020 ուս. տարվա ամբիոնի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ Ձեզ եմ ներկայացնում ամբիոնում կայացած տարեկան աշխատանքների հաշվետվությունը.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ

2019-2020 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ուսումնական տարում «Տեխնոլոգիական կրթություն» ամբիոնը սպասարկել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության (առկա բակալավրիատ և մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ) թվով 142 ուսանողների ուսուցման գործընթացը:

2019-2020ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների թիվն ըստ կուրսերի

Առկա բակալավրիատ		Առկա մագիստրատուրա		Հեռակա բակալավրիատ	
կուրսը	ուսանողների թիվը	կուրսը	ուսանողների թիվը	կուրսը	ուսանողների թիվը
1-ին	2	1-ին	6	1-ին	15
2-րդ	-	2-րդ	5	2-րդ	26
3-րդ	9			3-րդ	17
4-րդ	27			4-րդ	22

				5-րդ	14
Ընդամենը	38		11		94
Ընդամենը	143				

Ամբիոնն առաջնորդվել է նախապես կազմված և հաստատված ուսումնական պլաններով:

2019-2020 ուս. տարում ամբիոնն ունեցել է 22 ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերվող հարցեր:

1. ՈՒսումնական գործընթացներն ամբիոնում կազմակերպվել են գոյություն ունեցող նորմատիվային պահանջներին համապատասխան.

ա) ուսումնական տարին սկսվել է քննարկված և հաստատված դասաբաշխումով ու դասատախտակով:

2019-2020 ուս. տարում ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 5384 ժամ, որը կազմել է 6.5 հաստիք և բաշխվել ամբիոնի դասախոսների միջև հետևյալ կերպ.

տեխ. գիտ. դոկ., պրոֆ.- 1,0 հաստիք,

ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., պրոֆ.պաշտ. – 1.0 հաստիք,

տեխ. գիտ. թեկն., դոց. – 2.50 հաստիք,

դոցենտ- 2,0 հաստիք:

բ) Ամբիոնի հինգ ուսումնական լաբորատորիաները և երկու արհեստանոցները նախատեսված են ուսումնական դասընթացների գործնական - պրակտիկ սպասարկման համար:

Ռոբոտատեխնիկայի և թվածրագրային կառավարման հաստոցների լաբորատորիա, որտեղ բացի «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողներին, ուսանում են նաև թիվ 57 հենակետային դպրոցի ռոբոտատեխնիկայի խմբակի աշակերտներին:

Անհրաժեշտ է նշել, որ 2019-2020 ուս. տարվա մագիստրատուրայի ավարտական կուրսի թվով 6 մագիստրոսներին տեղավորել ենք աշխատանքի, իսկ այս տարվա մեր 1-ին կուրսի 6 մագիստրանտներից -----ը աշխատում են դպրոցներում:

գ) Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաները ներառված են եղել նոր ուսումնական պլաններում:

դ) Երկու քննաշրջաններն էլ (ձմեռային, ամառային) կազմակերպվել և անցկացվել են դեկանատի կողմից կազմված ժամանակացույցերին համապատասխան:

ե) ՈՒսուցումը կազմակերպվել է ըստ առարկայական ծրագրերի, իսկ արդյունքները ստուգվել են ընթացիկ ու ամփոփիչ քննություններով՝ կրեդիտային և գնահատման նոր համակարգերին համապատասխան:

զ) Պետական քննություններից առաջ ամբիոնի բոլոր առարկաների գծով կազմակերպվել են խորհրդատվություններ և ակնարկային դասախոսություններ:

Ամբիոնի ակադեմիական առաջադիմության պատկերը պետական ավարտական որակավորման քննությունների վերաբերյալ հետևյալն է.

2018-2019 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների ակադեմիական առաջադիմությունը

Կուրսը	ՈՒսանողների թիվը	Գնահատականները			
		գերազանց	լավ	բավարար	անբավարար
ԱԲ	27	13	14	-	-
ՀԲ	14	5	7	2	-
ԱՄ	5	5	-	-	-
Ընդամենը	46	23	21	2	-

է) Ամբիոնի դասախոսական անձնակազմի ղեկավարությամբ «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների համար իրականացվել են ուս. պլաններով նախատեսված մանկավարժական և ուսումնական պրակտիկաներ:

2019-2020 ուս.տարվա «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» մասնագիտության ուսանողների պրակտիկաները

Պրակտիկայի տեսակը	Կուրսը	Կիսամյակը	Պրակտիկայի տևողությունը
ՈՒսումնական պրակտիկա	ԱԲ 3-րդ	2-րդ	3 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա (շարունակական)	ԱԲ 3-րդ	1-ին	Շաբաթական 1օր՝ ամբողջ կիսամյակի ընթացքում
ՈՒսումնական պրակտիկա (բանկային)	ԱԲ 3-րդ	2-րդ	3 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ԱԲ 4-րդ	1-ին	6 շաբաթ
ՈՒսումնական պրակտիկա (բանկային)	ԱԲ 4-րդ	2-րդ	1 շաբաթ
Մանկավարժահետազոտական պրակտիկա	ԱՄ 1-ին	2-րդ	3 շաբաթ
Մանկավարժահետազոտական պրակտիկա	ԱՄ 2-րդ	1-ին	3 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ 3-րդ	1-ին	4 շաբաթ

ՈՒսումնական պրակտիկա	ՀԲ 4-րդ	2-րդ	3 շաբաթ
Մանկավարժական պրակտիկա	ՀԲ 5-րդ	1-ին	2 շաբաթ

Ամբիոնը լուրջ ուշադրություն է դարձնում պրակտիկաների կազմակերպմանը, ընթացքին և ավարտական հաշվետվությունների քննարկմանն ու որակին:

2. Գիտամեթոդական և գիտամանկավարժական աշխատանքների գծով.

ա) Կազմվել են դասախոսների 2019-2020 ուս. տարվա աշխատանքային անհատական պլաններ:

բ) Ամբիոնի աշխատակիցների կողմից տեղական և միջազգային գիտաժողովների գիտական ժողովածուներում հրատարակվել են բազմաթիվ գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր (կից ներկայացվում է համապատասխան ցուցակը):

գ) Ամբիոնում պարբերաբար կազմակերպվել են գիտական սեմինարներ (գրաֆիկը կցվում է), որոնց ակտիվ մասնակցել են նաև մագիստրանտները:

դ) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ամբիոնի գծով դասավանդվող առանձին առարկաների դրվածքը:

ե) Ամբիոնը համագործակցում է.

- Երևանի ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Հիդրոմետալուրգիայի և նյութագիտության պրոբլեմային լաբորատորիաների հետ:
- ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի «Նյութագիտություն» և «Հարթ թաղանթների ֆիզիկա» լաբորատորիաների հետ, որտեղ իրենց մագիստրոսական թեզերին առնչվող փորձերն են իրականացնում մեր մագիստրանտները:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ:

3. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի նիստերում պարբերաբար քննարկվել է ուսանողների հաճախումների հարցը, կազմակերպվել ուսումնամեթոդական միջոցառումներ, հանդիպումներ և քննարկումներ:

բ) Ամբիոնն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել ֆակուլտետի և համալսարանի արտաուսումնական կյանքին:

գ) Ամբիոնի դասախոսների մոտ իրականացվել են թվով 17 դասալսումներ՝ ըստ հաստատված գրաֆիկի (կցվում է):

4. Դասախոսների վերապատարաստման աշխատանքների գծով.

ա) Ամբիոնի վարիչ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ի. Սահրադյանը 2007թ-ից հանդիսանում է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ, ինչպես նաև տեղական և արտասահմանյան ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ:

բ)Ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ն.Ա. Օրդյանը ընդգրկվել է ՀՀ ԲՈՀ-ի 031 մասնագիտական խորհրդի անդամ:

Դոցենտ Նունե Օրդյանը որպես խորհրդատու ընդգրկված է «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի (ԾԻԳ) «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում «Տեխնոլոգիա» ոլորտի «Տեխնոլոգիա միջին դասարանների համար» հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներում:

գ) Ամբիոնի դոցենտ, տեխ.գիտ.թեկնածու Ս.Ռ.Վարդանյանը մասնակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ (ՈԱԱԿ) Կլոր սեղան – քննարկումներին և բուհերի որակի ապահովման մասնագետների հերթական հանդիպումներին:

Տեխնոլոգիական կրթության ամբիոնը տարեվերջյան նիստում քննարկել է 2019-2020 ուս. տարում իր կատարած աշխատանքային գործունեության հաշվետվությունը՝ քննադատելով և նշելով ապագա գործընթացները և ամբիոնի աշխատանքները գնահատել է լավ (2020թ. հուլիսի -9-ին կայացած Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հ.23 նիստ):

ՈՐՈՇԵՑԻՆ- Ամբիոնում կատարված աշխատանքները համարել լավ:

2)ԼՍԵՑԻՆ- Պետական քննությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ա.Սահրադյան-Հարգելի դասախոսներ այս ուսումնական տարում մենք ունեցել ենք 46 ավարտող ուսանողներ՝ 27 ուսանող բակալավրիատում, 5 ուսանող մագիստրատուրայում և 14 ուսանող հեռակա բակալավրիատում: Ավարտական քննությունների արդյունքում գերազանց գնահատական են ստացել ՝ 13 ուսանող բակալավրիատում, 5 ուսանող մագիստրատուրայուն, 5 ուսանող հեռակա բակալավրիատում, լավ գնահատական են ստավել՝ 14 ուսանող բակալավրիատում, 7 ուսանող հեռակա բակալավրիատում, իսկ բավարար գնահատական են ստացել միայն 2 ուսանող՝ հեռակա բակալավրիատում:

Ընդհանուր առմամբ արդյունքները գոհացուցիչ են:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պետական քննությունների արդյունքները համարել բավարար:

3)ԼՍԵՑԻՆ-2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Սահրադյան-Հարգելի գործընկերներ 2020-2021 ուսումնական տարվա համար հաստատվել է դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունը: Հաջորդ ուսումնական տարում ամբիոնում ունենք 6 հաստիք, որոնք բաշխվել է դասախոսների վրա՝ 0,5 հաստիք - Ն.Օրդյան և Մ.Աղաջանյան, իսկ մյուս դասախոսների ծանրաբեռնվածությունը հաստատվել է 1 հաստիքով:

ՈՐՈՇԵՑԻՆ-2020-21 ուս. տարվա ամբիոնի դասախոսների ուսումնական բեռնվածության մասին տեղեկությունը ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝		Ա.Ի. Սահրադյան
Քարտուղար՝		Ս.Ռ. Վարդանյան